

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵԿՏԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 811.19'373

ԳՄԴ 81.51-3

Ս 504

Գիրքը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Պատասխանատու խմբագիր՝ Բ. Գ. Պ. Վ. Լ. Կատվայան

Միմոնյան Ն.Մ.

Ս 504 Ստուգաբանական և բառաքննական դիտարկումներ /
Ն. Մ. Միմոնյան.– Եր.: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտ, 2022.– 77 էջ:

Ժողովածուում զետեղված հոդվածները վերաբերում են հայե-
րենի հնդեվրոպական ծագման բառերի քննությանը. առաջարկ-
վում են նոր ստուգաբանություններ, որոշ ստուգաբանություններ
ճշգրտվում են:

ՀՏԴ 811.19'373

ԳՄԴ 81.51-3

ISBN 978-9939-9277-5-6

© ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2022

ՀԱՅԵՐԵՆԻ՝ ԱՐՄՍՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ

Կրկնությունը հին և շատ տարածված բառակազմական եղանակ է: Հնդեվրոպական լեզվում կրկնավորների կազմության և գործառույթի, նրանց իմաստային առանձնահատկությունների վերաբերյալ հնդեվրոպաբանների տեսակետները հիմնականում միասնական են:

Կրկնության տեսակների, նրանց բառակազմական և ձևաբանական գործառույթների քննությանը մենք անդրադարձել ենք այլ հրապարակումներում (տե՛ս «Հայերենի բայակազմության մի քանի հարցեր (ծագումնաբանական քննություն)», «Հայոց լեզվի պատմության հարցեր» պրակ 3, Ե., 1991, էջ 277-312, ինչպես նաև «Հայերենի հնդեվրոպական ծագման կրկնավոր բայերը», «Հայերենագիտական միջազգային 5-րդ գիտաժողովի նյութեր», Նյու Յորք, 1996, էջ 63-75):

Հայերենում կան այնպիսի կրկնավոր բայեր, որոնք կազմված են նույն արմատի տարբերակային ձևերից, ինչպես *աղաւաղեմ-այլայլեմ, ողողանալ-ուլուլալ, թաթախեմ-թաթաւեմ, թառամ/իմ/-թարշամ/իմ/-թորշում/իմ* և այլն:

Այս հոդվածում կանդրադառնանք արմատի տարբերակային ձևերով կազմված այն կրկնավոր բայերին, որոնք կա՛մ հավաստի ստուգաբանություն չունեն, կա՛մ դրանց վերաբերյալ հայտնվել են տարբեր կարծիքներ:

Գ. Ջահուկյանը իր «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ գրում է. «Ունենալու, ստանալու և տալու, նվիրելու վերաբերյալ հայերենի ժառանգած բնիկ հնդեվրոպական ընդհանուր նշանակումները բավականաչափ հարուստ են...: Ունիմ, կալում, առնում, ստանամ, տամ, ընծայեմ, ձանեմ, *որոնեմ*, գտանեմ բառերը հայերենի բառապաշարի կայուն տարրերից են» (ընդգծումը մերն է)¹: Նույն աշխատության

¹ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան* (այսուհետև՝ ՀԼՊ), Ե., 1987, էջ 266-267:

մեջ հնագույն հայերենի բառային տարբերակների մեջ Գ. Ջահուկյանը բերում է *որոնեմ – պտոնեմ – փնտոնեմ* հոմանիշները:

Որոնեմ բայի վերաբերյալ Հ.Աճառյանը որոշակի կարծիք չի հայտնում. նշում է Բուզգեի՝ բնիկ հայերեն արմատ լինելու, Հյունքարպեյենտյանի՝ փոխառյալ լինելու, կարծիքները՝ չհակվելով ոչ մեկին. այս բառի համար ենթադրում է հնիս. *reu- «հետազոտել, հարցուփորձել, հարցնել» և նշում է այդ նախաձևից հայերենի *որոնել* անցման հնչյունական դժվարությունը²:

Գ. Ջահուկյանը *որոնեմ* բառը կապում է հ.-ե. *ereu-(*oreu-) *orou- նախաձևի հետ³. նա չի բերում հ.-ե. այլ լեզուների համապատասխանությունները: Յ.Պոկոռնու բառարանում *ereu- արմատի համար նշվում են «որոնել, հետազոտել, տեղեկանալ, հարցուփորձ անել որևէ մեկի կամ որևէ բանի մասին» իմաստները⁴ և հնդեվրոպական լեզուներից բերվում են հունարենի ձևերը *ἔρευμι, *ἔρουμεν, ἐρέ[Ϝ]ω, ἐρέ[Ϝ]ομαι (äol. ἐρέω), εἶρομαι (ἔρφομαι) «հարցնել, որոնել, փնտրել», կրետ. (հին հունարենի բարբառ) ἐρευταί, ἐρευνάω «հետազոտել, հարցնել, հետաքրքրվել որևէ մեկով, մի բանով» և հին հյուսիսային raun «հետազոտություն, փորձ», reyna «ստուգել, հարցուփորձ անել» զուգահեռները:

Ինչ վերաբերում է մյուս երկու՝ *փնտոնեմ/փնդոնեմ* և *պտոնեմ*, հոմանիշներին, դրանց մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ:

Հ. Աճառյանը բերում է *փնտոնել* կամ *փնդոնել* «պահանջել, որոնել» իմաստով բայերը և գրում է. «Ծագում է նախառոր *պտոնել* ձևից, որի վերայ տե՛ս *պտիռ*» (ՀԱԲ, հ.4, էջ 508): *Պտիռ* բառահոդվածում Աճառյանը բերում է «որոնում, փնտրտուք» իմաստները՝ նշելով, որ այն առանձին անգործածական է և հանդես է գալիս ինչպես *աղբասպտիռ* բառում, այնպես էլ *պտոնել* «հողը փորփրելով

² Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 1977, հ. 3-րդ, էջ 585:

³ Գ. Ջահուկյան, ՀԼՊ, էջ 123:

⁴ J.Pokorny, *Indogermanisches etymologisches Wörterbuch*, 1-2, Bern-München, 1959-1969, p. 337.

պրպտել» բայի մեջ. նշվում են նաև բարբառային *պտրիլ* (Տփ.), *պրտրոնել* (Ղրբ.), *բըրբըղիլ* (Զթ.) ձևերը, և հավելվում է, որ Մարաղայի բարբառում կա *պտոտել* ձևը. այս վերջինը Զեյթունի *բըրբըղիլ*-ի հետ այդ բառի կրկնական ձևերն են⁵:

Գ. Զահուկյանը *փն-դ-ռել*, *փն-տ-ռել* արմատների համար «պահանջել, որոնել» իմաստով բերում է գոթ. *findan* «գտնել, ճանաչել», հին վերին գերմ. *findōn*, հին անգլ. *findian* «որոնել, հետազոտել», նոր վերին գերմ. *fahnden* «հետամտել, հետազոտել», հին սաքս. *fundon* «ձգտել, գնալ», որոնց համար կանխադրում է հ.-ե. **pent-* «գնալ, ստիպել, գտնել» նախաձևը⁶: Նույն տեղում 41 ծանոթագրության մեջ նա բերում է նաև *պտոտել* ձևը, որի համար կանխադրում է հ.-ե. **peu-t-* **peu-*ից «հետազոտել, հասկանալ». նույն նախաձևից է համարում ռուսերեն *ис-пыт-ывать*, *пыт-ать* բառերը:

Պրպտել բառը իբրև գլխաբառ չկա ՀԱԲ-ում. այն գործածված է *որոնել* բառի բացատրության մեջ⁷: Այդ բառը չկա նաև «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում. այստեղ բերվում են «*պտոտել*, *պտիոտ*/յորմէ աղբապտիոտ/բրել և պեղել գերկիր իբր յուզելով և որոնելով. ուստի և ռմկ. փնտոտել»⁸:

Պտոտել բառի բացատրության մեջ *պրպտել*-ը գործածված է նաև «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» բառարանում՝ «պրպտել, փնտոտել հողին»⁹:

Հ. Աճառյանի գավառական բառարանում նշվում է *պրպտել* «ամեն կողմ փնտոտել»¹⁰:

Պտոտել, *պտոտուկ*, *պտոտուկ անել* ձևերը «փնտրել, փնտրտուք, փնտրել» իմաստներով կան Ղարաբաղի բարբառում¹¹: *Պտոտել*,

⁵ Նույն տեղում, էջ 111:

⁶ **Г. Джаукян**, *Очерки по истории дописменного периода армянского языка* (далее Очерки...), Ер., Изд-во АН Арм. ССР, 1967, стр. 104.

⁷ **Հ.Աճառյան**, ՀԱԲ, հ.3, էջ 585:

⁸ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1857, հ.2, էջ 665:

⁹ *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1865 թ., էջ 702:

¹⁰ **Հր.Աճառյան**, *Հայերեն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Թ, Մոսկվա, 1902, էջ 934:

պտոռտել, պտոռոցք, պտոռտել, պտոռտել ձևերը բերվում են նաև Հայոց լեզվի բարբառային բառարանում¹²:

Ս. Մալխասյանցի բառարանում կան *պտռել, պտռոցք, պտռում* բառերը, իսկ *պտոռտել*-ը համարում է *պտռել*-ի «յաճախական ձևը»: *Պրպտել*-ը բացատրում է «մանրամասն և ուշադրութեամբ փնտռել, կրկտել, որոնել»¹³:

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, հայերենի բարբառներում *պտռել* բառը ավելի հաճախական կիրառություն է ունեցել թե՛ իբրև բայ, թե՛ իբրև գոյական:

Կարծում ենք, որ *պրպտել*-ը *պտոռտել/պտռել* բայի հնչյունափոխության (դրափոխություն՝ *պտռել-պոտել-պրպտել*. հմմտ. *սառ-սարսուռ, բառ-բարբառ, տարմ-տարտամ*) ենթարկված տարբերակն է (հմմտ. Հ.Աճառյանի նշած Ջեյթունի բարբառի *բոլբոլի* ձևը) և նույնպես ունի հնդեվրոպական ծագում:

Հ. Աճառյանը կրկնության տեսակների մեջ նշում է կրկնության ժամանակ *ը*-ով վերջացող արմատի *ը-տ* փոփոխության հնարավորությունը, ինչպես, օրինակ, *կարել-կարկատել*¹⁴: Այս դեպքում ևս հնարավոր է *պտռել-պոտել-պրպտել* անցումը:

Յ. Պոկոռնու բառարանում *pet- նախաձևի տակ բերվում է լատ. petō, petere ձևը՝ «պահանջել, խնդրել, սաստիկ ցանկանալ որևէ բան, որոնել, փնտրել» իմաստներով: Լատիշերենում կա pētīt «ցանկություն ունենալ, փնտրել, որոնել» իմաստներով¹⁵: Ալոիս Վալդեի լատիներենի ստուգաբանական բառարանում նույնպես բերվում է լատիներեն petō, -ēre, -īvi «հասնել որոնածին, փնտրել» իմաստներով¹⁶: Այս արմատից են լատիներենի petitor «խնդրող, հայցորդ» petitum «պահանջ, խնդրանք» petitrix, icis «կին հայցորդ»:

¹¹ Գ. Բաղդասարյան, *Արցախի բարբառի բառարան-հանրագիտարան*, հ. Բ, Ստեփանակերտ Պոլիգրաֆ, 2010թ. էջ 234:

¹² *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հ. Ե., Ե., 2008թ., էջ 128:

¹³ Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1945, հ. 4, էջ 131:

¹⁴ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, Ե., 1957թ., հ. 3-րդ, էջ 95:

¹⁵ Նշվ. աշխ., էջ 826:

¹⁶ A. Walde, *Lateinisches etymologisches Wörterbuch*, Heidelberg, 1910, p.580.

Այստեղ տեղին է հիշել, որ գրաբարում *խնդիր* բառը ունեցել է «որոնում, փնտռուք, հարցուփորձ, պահանջ, աղերս, աղաչած բանը» իմաստները (ՀԱԲ, հ. 2, էջ 379), իմաստներ, որոնք համահունչ են հ.-ե. այլ լեզուներում պահպանված իմաստներին:

Հետաքրքրական է, որ Կ. Բաքի հնդեվրոպական լեզուների հոմանիշների բառարանում բերվում են վուլգար (ժող.) լատիներենի *circare*, իտալերենի *cērc.re* «փնտրել, որոնել», *cercata* «փնտրուք, որոնում» իմաստներով՝ նույնպես կրկնավոր կազմությամբ՝ *r-t* համապատասխանությամբ, ինչպես հայերենում¹⁷: Այստեղ կարելի է նշել նաև ֆրանսերենի *cherche* ձևը՝ նույնպես կրկնավոր կազմությամբ:

Մյուս բայը, որին կանդրադառնանք ստորև, *փայլել*-ն է:

Փայլել բայը հանգում է հ.-ե. *(s)p(h)el- նախաձևին (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 476-477, Черки..., էջ 65): Այս արմատի տարբեր ձայնավորումով տարբերակներն են *փողիս*, *փողփողիս*, *փաղփաղիս*, *փողփողեմ* ձևի համար Գ. Ջահուկյանը նշում է հ.-ե. *pʰol-, իսկ *փաղփաղիս* ձևի համար՝ *pʰɛl- նախաձևը (տե՛ս ՀԼՊ, էջ 152): Նույն նախաձևից է համարում նաև *պաղ*, *պաղպա(ն)ջ* կազմված *փ/պ* տարբերակով: Գ. Ջահուկյանը նշում է, որ հայերենում հ.-ե. *pʰ-ն սովորաբար արտացոլվում է իբրև *հ-* և *փ-*, բայց կան արմատներ, որոնցում հ.-ե. *pʰ-ի դիմաց առկա է *պ* (տե՛ս ՀԼՊ, էջ 253), և բերում է *պաղ* «փայլ» (*պաղպպանձ* բառում) և *պաղպա(ն)ջ* «փայլ, ցուլ»:

Պաղ արմատը Հ. Աճառյանի արմատական բառարանում վկայված է երեք իմաստով՝ «սառոյց, քար և փայլ, փայլին, ցուլ» (ՀԱԲ, հ. 4, էջ 12-13): Վերջին՝ «փայլ, փայլին, ցուլ» իմաստներով *պաղ* բառի կրկնավոր ձևն է համարում *պաղպաջ*, որի ածանցված ձևերից են *պաղպաջել* (նաև *բաղբաջել*), *պաղպաջուն*, *պաղպաջումն*, *պաղպաջունք* «գարդարուն» (ՀԱԲ, հ. 4, էջ 14-15): *Փայլ* «պայծառ վառիլը, շողալը, պայծառութիւն» բառահոդվածում

¹⁷ C.D. Buck, *Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages*, Chicago, 1949, p. 764, և Г.Ф. Зорько, *Новый большой итальянско-русский словарь*, М., Изд-во Русский язык Медиа, 2006, стр. 187:

Հ. Աճառյանը նույնպես բերում է *փաղփաղիլ, փողել, փողփողել* բառերը, որոնք համարում է *փայլ* արմատի «միս ձևերը» (ՀԱԲ, հ. 4, էջ 476-477): Հնդեվրոպական նույն *(s)p(h)el- նախաձևը հայերենում արտացոլված է ն' փ-ով, ն' պ-ով: Փ-ով ձևերը ներկայացված են ձայնդարձային *ա-ռ* տարբերակներով, իսկ *պ-ով (պաղ)* ձևը հանդես է գալիս ոչ թե արմատի պարզ կրկնությամբ, այլ վերջին բաղաձայնի փոփոխությամբ ուղեկցվող կրկնությամբ՝ *պաղպաղ*:

Պաղպաղ բառի ծագման մասին այլ կարծիք է հայտնում Է.Աղայանը: Նա Մեղրու բարբառում գործածվող *բուղ* «1.կայծ, 2.փայլ, ցուք» նշանակությամբ բառի հնագույն ձևն է համարում *բող*-ը, որի զուգահեռն է, ըստ նրա, Ղարաբաղի բարբառի *յող* «կարմիր կրակ կտրած ածուխ» բառը: Նա գրում է. «Այս բառը ծագում է հնիս. *bhel-/*bhal-, *bhəl, *bhol/ արմատից», և բերում է սանսկրիտի bh.la «1.փայլ, 2.ճակատ» և հունարենի φάλος «փայլուն, շողշողուն, սպիտակ» զուգահեռները¹⁸: Նա շարունակում է. «Բարբառային այս բառերը (*բուղ, յող*)... անկասկած զուգահեռ *բող* ձևն են ներկայացնում հին գրաբարյան *պաղ* արմատի, որ առանձին չի գործածվել, բայց որից ունենք *պաղապանծ, պաղապանծական...* և կրկնությամբ *պաղպաղ, պաղպաղել*: ...Իմաստով *պաղ* արմատը և կրկնավոր *պաղպաղ* բառը միանգամայն համընկնում են Մեղրու և Ղարաբաղի բարբառների *բուղ* և *յող* բառերին»¹⁹, և գտնում է, որ գրաբարյան *պաղ* արմատը ծագում է հնիս. *bhel- արմատի *bəl ձևից, և եզրակացնում է, որ այդ բոլոր բառերը (բուք, բող, պող, պաղպաղ, փայլել, փաղփաղիմ, փողփողիմ, փայլ, փուք, փչել) հանգում են հ.-ե. *bu, *bhu արմատին, որ ունի «փչել» նշանակությունը²⁰: Իհարկե, նա միանգամայն ճիշտ է, որ *բուղ*-ը, *յող*-ը նշանակում են «կայծ, ցուք, կրակ կտրած ածուխ», նաև «փայլ», որ կարող են ծագել կրակը փչելով արծարծել, բորբոքել իմաստից (հմմտ. հայ. *բորբ* (հ.-ե. *bho-bhr-o), բրբ. *բերփել*,

¹⁸ Է. Աղայան, *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1974, էջ 130:

¹⁹ Նշվ. աշխ., էջ 131:

²⁰ Նույն տեղում:

պերփել): Իսկ *փողփողել, փաղփաղել, պաղպաղել* բառերի համար վերականգնվում է *sphel, *phel նախաձևը՝ «փայլել» իմաստով: Կարծում ենք, որ այս արմատները իմաստային առումով դժվար է աղերսակցել «փչել» իմաստով արմատների հետ: Բացի այդ՝ հ.-ե.*sphel-, *phel- ձևերը հ.-ե. մյուս լեզուներում ևս չունեն «փչել» իմաստին աղերսակցվող զուգահեռներ. հ.-ե. լեզուներում առկա են հետևյալ զուգահեռները՝ հինդկ. sphulīṅga «կայծ» vi-sphulīṅga- «կայծեր արձակել»: g աճականով *sp/h/el-g- ձևից են լեթթ. spuīguōt «փայլել, կայծկլտալ» spuīgans, spuīgans «փայլուն», գերմ. *flinka- «փայլել, առկայծել», նոր վերին գերմ. flunkern «փայլել, կայծկլտալ»: Հ.-ե. նախաձևը հանդես է գալիս նաև d- աճականով՝ հուն. σπλῆδός «մոխիր», լատ. splendeō, ēre «փայլել, առկայծել» հին լիտ. spėndžiu, spendęti «փայլել, առկայծել, պսպղալ, լուսավորել», հնարավոր է նաև հին իռլ. lēss «լույս, լուսավորություն», միռլ. lainnech «փայլուն» (տե՛ս J.Pokorny, p. 987):

ԳԱՆԳԱՏԻՄ

Հր. Աճառյանը «Հայոց լեզվի լիակատար քերականություն» աշխատության 3-րդ հատորում քննության է առել նաև կրկնությունը որպես բառակազմական եղանակ: Նա անդրադառնում է կրկնության տարբեր տեսակներին և առանձնացնում է կրկնության վեց ձև՝ ներկայացնելով հայոց լեզվի՝ կրկնությամբ կազմված բառերի ըստ հնարավորին ամբողջական ցանկը¹:

Հայտնի է, որ կրկնությունն իբրև բառակազմական եղանակ շատ հին երևույթ է. այն հատուկ է եղել հնդեվրոպական նախալեզվին և շարունակել է մնալ իբրև բառակազմական գործուն եղանակ հ.-ե. լեզուների մեծ մասում նաև հետագայում: Հայերենում կրկնությամբ կազմված բառերի մեջ հանդիպում են և՛ անվանական, և՛ բայական արմատներ: Կրկնավոր անվանական արմատներն ավելի սակավաթիվ են, և անունների կազմության այդ եղանակը հայերենում դադարել է գործուն միջոց լինելուց՝ ի տարբերություն բայարմատների, որոնցում կրկնության եղանակներն ավելի բազմատեսակ են:

Հին հայերենի կրկնությամբ կազմված բայերին մենք անդրադարձել ենք «Հայերենի բայակազմության մի քանի հարցեր» աշխատության մեջ²: Այստեղ կներկայացնենք կրկնավոր մեկ բայի՝ **գանգատիմ**, ստուգաբանության մեր փորձը:

Գանգատիմ բայը Հր.Աճառյանը համարում է կրկնավոր, բայց անստույգ ծագման բառ, որի պարզական արմատը հայտնի չէ³: **Գանգատ** արմատի համար նշում է «տրտունջ, բողոք» իմաստները:

Գ. Ջահուկյանը **գանգատ (գանգատիլ)** բառի համար նույնպես նշում է «տրտունջ, բողոք» իմաստները և գրում է. «Թերևս բնիկ հնդեվրոպական *ghan «բերանը լայն բաց անել, հորանջել» արմատից կազմված կրկնավոր ձև (կամ թերևս *ghan-u)⁴: Յ.Պոկոռնու

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.3, Եր., 1957, էջ 83-93:

² Հայոց լեզվի պատմության հարցեր, պրակ 3, Եր., 1991թ., էջ 277-312:

³ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.1, Եր., 1971, էջ 515(այսուհետև՝ ՀԱԲ):

⁴ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 150:

բառարանում *ǵhan- նախաձևից ծագած են համարվում հունարենի χάινω «բերանը բաց անել», աորիստը՝ -χωνον, հին իսլանդերեն gan «հորանջ», gana «բացվել(змять)», նորվեգերեն, շվեդերեն gan «ըմպան, բուկ, երախ»⁵: Կարծում ենք, որ հ.-ե. այս նախաձևին դժվար է հանգեցնել հայերենի **գանգատ** բառը, մանավանդ եթե նկատի ունենանք հ.-ե. նշված լեզուներում պահպանված իմաստները, որոնց ոչ մի կերպ իմաստային առումով չի աղերսվում հայերեն բառը:

Նոր հայկազյան բառարանում **գանգատիմ** բառը բացատրվում է «քրթմնջել, տրտնջալ, բողոքել, գանգատ առնել», նշվում են նաև հուն. γογγύξω, լատ. **murmuro** բայերը, որոնք իմաստային առումով գուցադրելի են համարվում հայերեն **գանգատիմ** բայի հետ⁶:

Մի կողմ թողնելով լատիներենի murmuro ձևը, որը թե՛ իմաստային, թե՛ հնչյունական առումներով տարբերվում է հայերենի **գանգատիմ** բայից և առնչվում է հայ. մրմուռ, մրմռալ, մռռալ բնաձայնական արմատներին⁷, անդրադառնանք հուն. γογγύξω-ին:

Հ. Ֆրիսկը հուն. γογγύξω-ն համարում է բնաձայնություն և անստույգ ծագման, այդուհանդերձ համեմատում է հինդկ. gaṅgūyati «բարձր ճչալ, աղաղակել», guṅjati «մրմնջալ» արմատների հետ և եզրակացնում, որ դրանք դրսևորում են ընդհանրություն իբրև պարզ բնաձայնական կազմություն⁸:

Պ.Շանտրեն, հունարենի ստուգաբանական բառարանում բերելով γογγύξω բառը, հայտնում է այն կարծիքը, որ այդ բառը բնաձայնություն է, չունի ճշգրիտ ստուգաբանություն և չի կարելի համեմատել սանսկրիտի Ֆրիսկի նշած արմատների հետ⁹:

Յու. Պոկոռնին հուն. γογγύξω արմատը հիշատակում է հ.-ե. *gang- նախաձևին նվիրված բառահոդվածում, բայց, ինչպես և

⁵ J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, B. I. Bern-München, 1959, S. 411.

⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 528:

⁷ Տե՛ս ՀԱԲ, հ.3, էջ 365-366:

⁸ H. Frisk, Griechisches Etymologisches Wörterbuch, B. 1, Heidelberg, 1960, S.318.

⁹ P. Chantraine, Dictionnaire etymologique de la langue grecque. Histoire des mots, T. 1, Paris, 1968, p 231.

Ֆրիսկը, այն համարում է բնաձայնական արմատ¹⁰:

Մ. Ֆասները ռուս. гугнивый, ուկր. гугнити, սլով. gôgnjati արմատների ծագման վերաբերյալ նշում է երկու հնարավոր բացատրություն. սլավոնական լեզուների այս ձևերը կա՛մ աղերսվում են հինդ. gañjas «արհամարհանք», հուն. γογγανέω «ծաղրում եմ» ձևերին, կա՛մ, որը նրա կարծիքով ավելի հավանական է, հինդկ. gúnjati, հուն. γογγύξω բնաձայնական արմատներին¹¹:

Վերը բերված ստուգաբանական նյութը թույլ է տալիս անելու երկու եզրակացություն. նախ՝ հուն. γογγύξω-ն և սլավոնական լեզուների ու հին հնդկերենի նշված ձևերը, իրոք, բնաձայնական ծագում ունեն, և երկրորդ, որ դրանք չեն կարող հանգել հ.-ե. *gang- նախաձևին:

Հ.-ե. *gang- ձևի համար Պոկոռնու բառարանում բերվում են «ծանակել, հեզնել, ծաղրել», *gango-s-ի համար՝ «ծաղրանք, ծաղրու-ծանակ» իմաստները: Այս արմատից են հինդկ. gañṣa- «քամահրանք, արհամարհանք», gañjana-- «արհամարհել, ծաղրել», հուն. γογγαίνειν «ծաղրել», անգլոսաքսոներեն canc «արհամարհանք», cancettan «ծաղրել», cincung «բարձրաձայն ծիծաղ», հին հյուսիսային kangenydre «ծաղրական բառ» ձևերը¹²:

Հ.-ե. լեզուների այս արտացոլումները հիմք են տալիս ենթադրելու, որ այդ նույն նախաձևից կարելի է ծագած համարել և հայերենի **ծան-ակ**-եմ բառը, որը համարվել է անստույգ ծագման բառ: **Ծան**- արմատն առանձին անգործածական է, իսկ **ծանակ**-ի **ծան**-ը կապել «ճանաչել» արմատի հետ, որը, ըստ Աճառյանի, առաջարկվում է Նոր հայկազյան բառարանում, իմաստային առումով խիստ անհավանական է¹³: Նույն ենթադրությունն է անում և Գ Ջահուկյանը «Հայերեն ստուգաբանական բառարանում»: **Ծանակ** բառահոդվածում նա գրում է. «Թերևս կազմված է բնիկ հնդեվրոպական *ծան*- արմատից՝ *-ակ* վերջածանցով՝ «ճանաչել տալ, հայտնի դարձնել»

¹⁰ Տե՛ս J. Pokorny, նշվ. աշխ., էջ 352:

¹¹ М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. I, М., 1986, с. 470.

¹² Տե՛ս J. Pokorny, նշվ. աշխ., էջ 352:

¹³ .ՀԱԲ, հ. 2, էջ 444:

իմաստային անցումով: Ավելի քիչ հավանական է կապել *ծաղ* «ծաղր» արմատի հետ՝ ենթադրելով *l/*n հերթագայություն»¹⁴:

Ծաղր բառը և՛ Հ.Աճառյանը, և՛ Գ.Զահուկյանը համարում են հնդեվրոպական ծագման՝ կապելով հ.-ե. *g'ol-, *g'el- նախաձևին, որից ծագում է նաև **ծիծաղ** բառը¹⁵: **Ծաղր** բառի իմաստների մեջ և՛ գրաբարյան բառարաններում, և՛ ժամանակակից հայերենի բառարաններում որպես առաջին իմաստ նշվում են *ծիծաղ, ուրախություն, ծիծաղելի, ծիծաղելու արժանի*:

Ծաղր բառը հաճախ գործածվում է **ծանակ** բառի հետ՝ **ծաղրուծանակ, ծաղրուծանակի ենթարկել**, որը բացատրվում է *ծիծաղ և խայտառակություն, ծիծաղի և խայտառակության առարկա դարձնել*¹⁶:

Կարծում ենք, որ թե՛ իմաստային, թե՛ հնչյունական համապատասխանությունների տեսակետից ավելի հավանական է մեր ենթադրությունը. «արհամարհանք, քամահրանք, ծաղրել, հեզնել» իմաստներից կարող էր զարգանալ «խայտառակել, խաղք ու խայտառակ անել» իմաստը:

Հնչյունական առումով էլ այն ոչ մի դժվարություն չի ներկայացնում. հ.-ե. *g > հայ. ծ համապատասխանություն առկա է նաև այլ արմատներում, իսկ ձայնորդից հետո g -ի անկումը ևս օրինաչափ կարելի է համարել¹⁷:

Այժմ վերադառնանք **գանգատիմ** բային: Հայերեն այս արմատը, կարծում ենք, հանգում է հ.-ե. *ǵen-/*ǵenə- նախաձևին, որի համար վերականգնվում են 1) «ձգտել, հետամտել, փնտրել», 2) «պահանջել, խնդրել» (*ǵenos) իմաստները: Այս նախաձևի զուգահեռներն առկա են հին հնդկերենում *vánati, vánóti* «ձգտել, ձեռք բերել», միջին պարսկերենում *vanitan* «ձեռք բերել, հաղթահարել, ցանկություն,

¹⁴ Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 359 (այսուհետև՝ ՀՄԲ):

¹⁵ Տե՛ս ՀՄԲ, հ. 2, էջ 439, և ՀՄԲ, էջ 358:

¹⁶ Տե՛ս Ա. Սուքիասյան, Մ.Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, էջ 300:

¹⁷ Արմատավերջի g -ի անկման համար տե՛ս նաև Բ.Ա. **Серебрянников**, Вероятностные обоснования в компаративике, М., 1974, էջ 76:

պահանջ» իմաստներով. Ավեստայում վկայված է նաև *van-tar* «հաղթող» (*nomina agentis*) իմաստը, որը ևս կարելի է բխեցնել «ձգտել, պահանջել» իմաստներից [«պահանջել- ձգտել- հասնել - (և ի վերջո) հաղթել» իմաստային անցումներով¹⁸:

Հայերենի **գանգատիմ-ը** ևս իմաստային առումով մոտ է հ.-ե. լեզուներում պահպանված վերը նշված իմաստներին. գանգատվել, ի վերջո դիմել նշանակում է բողոքել՝ որևէ բան պահանջելու, ստանալու ձգտումով:

Հնչյունական արտացոլման տեսակետից էլ հայերեն բառի՝ նշված նախաձևից ծագած լինելը դժվարություն չի ներկայացնում: Հ.-ե. *ǵ- > հայ. գ համապատասխանություն առկա է բառակզբում գ ունեցող հայերեն բնիկ արմատների մեծ մասում, որոնց թիվը, ըստ Աճառյանի արմատական բառարանի տվյալների, երեսուներեք է, որոնցից քսանյոթում բառակզբի գ-ն հ.-ե.*ǵ-ի արտացոլումն է: Եթե նկատի ունենանք նաև հետագայում կատարված նոր ստուգաբանությունները, ապա դրանց թիվն ավելանում է առնվազն տասով: **Գան-** պարզական արմատը հայերենում չի պահպանվել, իսկ **ն/տ** կրկնությանը ձևն արտահայտել է սաստկական իմաստ:

Հր. Աճառյանը նշում է, որ **գանգատիմ** բառը վկայված է նաև **քանքատիլ** ձևով, որը նա համարում է ավելի հին ձև¹⁹: Կարծում ենք, որ այդ պնդումը հնչյունաբանորեն չի հիմնավորվում, քանի որ ք-գ (շնչեղ խուլ - ձայնեղ) անցում տիպաբանորեն հնարավոր չէ:

Մեր առաջարկած վարկածի հիմնավորման համար բերենք Վյաչ.Վս.Իվանովի կարծիքը խեթերենի *ǵek- բայարմատի մասին:

Վ.Վ. Իվանովը «Труды по этимологии индоевропейских и древнепереднеазиатских языков» աշխատության առաջին հատորում, որը նվիրված է խեթերենում պահպանված հնդեվրոպական արմատներին, խոսելով խեթերենի *ǵek- բայարմատի և նույն արմատի կրկնավոր *ǵeǵak- ձևի մասին, բերում է Ա. Մեյեի կարծիքը, որ հնդեվրոպական արթմատիկ ձևերի ներկա ժամանակի հետքերը անհետացել են հ.-ե. շատ լեզուներում. օրինակ՝ վեդայական

¹⁸ Տե՛ս J. Pokorny, նշվ. աշխ., էջ 1146:

¹⁹ ՀԱԲ, հ.1, էջ 515:

*vasmi «ուզում եմ, ցանկանում եմ», usmasi «ցանկանում ենք», ավեստա vasəmi, usmahi, չունեն համապատասխանություններ այլ լեզուներում՝ բացի հնդիրանական լեզուներից: Վ.Իվանովը գրում է, որ այժմ բայական *yek- բայարմատի առկայությունը հնդեվրոպական հիմք լեզվում կարելի է ապացուցված համարել շնորհիվ խեթերենում գտնված *yek- «ցանկանալ, պահանջել» բայի, որը համապատասխանում է հին հնդկ. vas-, ավեստայի vas- ձևերին և՛ իմաստով, և՛ խոնարհման տիպով (հմմտ. խեթ. yek-mi «ես պահանջում եմ», հին հնդկ. vās-mi)²⁰: Այնուհետև նա գրում է, որ շատ հետաքրքրական է լեզվաբանների կողմից չնկատված այն փաստը, որ թե՛ խեթերենում, թե՛ վեդայական հնդկերենում այս բայը հանդես է գալիս կրկնավոր ձևով՝ դրսևորելով լիակատար կառուցվածքային նմանություն: Խեթերեն քեթ- նշանակում է «բազմիցս, շատ անգամ պահանջել», և կրկնության տիպով համապատասխանում է վեդայական vavás-ին, որը Ռիգվեդայում գործածվում է «ցանկանալ, որ այս կամ այն գործողությունը կատարվի» նշանակությամբ²¹: Իվանովը գրում է, որ խեթերենում այդ արմատից կազմվել են ոչ միայն նշված բայահիմքերը, այլև բայանուն գոյականներ՝ -uar uek(u)uar «պահանջ»(требование) նշանակությամբ: Այդ գոյականի հին տարահիմք տիպը *-yer-/yen- (желать) ենթարկվել է փոփոխության՝ -r-ով հիմքերի ընդհանրացման հետևանքով, բայց պահպանվել են նաև -yan-ով կազմված գոյականներ²²:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «ցանկանալ, պահանջել» իմաստով խեթերեն բայի հին ձևը yen-ն է, այսինքն՝ հայերենի *զանգատիմ* բայի համար կանխադրվող *yen- արմատը իմաստային զուգահեռ ունի նաև խեթերենում: Սա ավելի հավանական է դարձնում մեր առաջարկած ստուգաբանությունը:

²⁰ **Вяч.Вс. Иванов**, Труды по этимологии индоевропейских и древнепереднеазиатских языков, т. 1, Индоевропейские корни в хеттском языке, „Языки славянских культур», Знак, М., 2007, стр. 70.

ԽԱՐԵԼ/ԽԱՐԽԱՓԵԼ

Խարել բայը Հ. Աճառյանը դասում է դեռևս չստուգաբանված բառերի շարքը և բացատրում է «խարել, մոլորեցնել, գլխե հանել», որից՝ *խարանք* «խարկանք», *խարող* «խարող, պատրող», և բերում է օրինակներ Փարպեցուց. նա ավելացնում է, որ այդ նորագյուտ բառն ինքն է գտել ու մեկնել¹:

Խարել բայը չկա ՆՀԲ-ում, բայց կան *խարխափ* «խարխափելով, կուրօրեն, շօշափելով և երերալով», *խարխափեմ* «նման կուրացն մոլորելոց, որք ընդ խաւարն խարխափիցեն»²: *Խարել* բայը բերվում է ն՝ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանում», և՛ Լ. Հովհաննիսյանի՝ «ՆՀԲ-ում չվկայված բառեր» բառարանում, և՛ Լ. Խաչատրյանի «Գրաբարի ուսումնական բառարանում»՝ բոլորն էլ «խարել, մոլորեցնել» իմաստներով³:

Գ. Զահուկյանը իր ստուգաբանական բառարանում *խարել* բառի մասին գրում է, որ ունի «խարել, մոլորեցնել» իմաստը և ավելացնում է, որ ծագումն անհայտ է⁴: Մինչդեռ 1967 թ. հրատարակած «Очерки по истории дописьменного периода древнеармянского языка» աշխատության մեջ *խարդախ* բառի բացատրության ժամանակ բերում է նաև *խարել* «խարել» բայը և համեմատում հունարենի kerdistos «ներգ, խորամանկ», kerdaleos «խորամանկ, օգտակար, շահեկան», kerdalee «խորամանկ աղվես», kerdos «շահ, օգուտ, խորամանկ մտահղացում» բառերի հետ և կանխադրում է հ.-ե. *kerd- նախածնը⁵: Ստուգաբանական բառարանում *խարդախ*

¹Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., 1973, հ. 2, 344 (այսուհետև՝ չԱԲ):

²Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ե., 1979, հ.1, էջ 931-932 (այսուհետև՝ ՆՀԲ):

³Ռ. Ղազարյան, *Գրաբարի բառարան*, Ե., 2000, էջ 561, Լ. Հովհաննիսյան, *Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010, էջ 135, Լ. Խաչատրյան, *Գրաբարի ուսումնական բառարան*, Վենետիկ, 2016, էջ 135:

⁴Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 320 (այսուհետև՝ չԱԲ):

⁵Գ. Դժաուկյան, *Очерки по истории дописьменного периода древнеармянского языка*, Ե., 1967, с.111 (далее Очерки...).

բառի բացատրության ժամանակ, որի ծագումը նույնպես համարում է չպարզված, նորից նշում է *խարել* բայը⁶:

Անկախ *խարել* բայի ծագման մասին եղած կարծիքներից կարծում ենք, որ *խարել* բայի հետ իմաստային աղերս ունի հայերենի *խարխափեմ* բայը:

Հ.Աճառյանը *խարխափ* բառի բացատրության մեջ գրում է. «կոյրի պես ձեռքով այս ու այն կողմ շօշափել». գործածում է միայն նախդիրով՝ *առ խարխափ, առ խարխափս, ընդ խարխափս*, որից *խարխափել*»: Հ.Աճառյանը *խարխափ*-ը համարում է կա մ **խափ* արմատի կրկնությամբ կազմված, կա մ *-ափ* մասնիկով՝ անծանոթ **խարխ* արմատից⁷:

Գ. Ջահուկյանը *խարխափեմ* բայի համար որոշ կասկածով ենթադրում է *խափ* արմատը, որի կրկնավոր ձևն է համարում *խարխափեմ*-ը. *խափ* -ի համար կանխադրում է հ. -ե. *kap- «բռնել ճանկել, խլել» ձևը⁸: Գ.Ջահուկյանը *խարխափեմ* բառը համեմատում է *շաւշափեմ*-ի հետ (*շաւշափեմ* – *խարխափեմ*)՝ նկատի ունենալով շ/խ լծորդ հնչյունների առկայությունը նաև հայերեն այնպիսի բառերում, ինչպիսիք են *շարշլեմ- խարխալեմ, շեղ-խեղ, շրտնում-խրտնում* և այլն:

Կարծում ենք, որ *խարխափեմ* բայը կազմված է *խարել* բայի, այլ ոչ թե **խափ* արմատի կրկնությամբ: Նախ՝ *խափ* արմատը Հ.Աճառյանը համարում է չստուգաբանված արմատ, բացատրում է որպես «որոգայթի մէջ բռնուիլը, արգելք, խափանում»: Բնագրային բերված բոլոր օրինակներում նշվում են «արգելք լինել, դադարեցնել, աչքը փակուիլ, տեսութիւնը կորցնել, դադարիլ, վերջանալ, գոցել, մարել, հանգցնել» իմաստները⁹, որոնք, կարծում ենք, *խարխափել* բառի արտահայտած իմաստների հետ դժվար է աղերսակցել: Աճառյանը նշում է նաև *խափ* արմատի *խուփ* ձայնդարձային տարբերակը՝ որոշ կասկածով կապելով դրանք

⁶Գ. Ջահուկյան, ՀՄԲ. էջ 230:

⁷Հ. Աճառյան, ՀԱԲ, հ.2, էջ 346:

⁸Դ. Джайкян, Очерки..., с. 203»

⁹Հ. Աճառյան, ՀԱԲ, հ.2, էջ 353:

կափ արմատի հետ, որի «...առաջին նշանակութիւնն է փակել, գոցել» և ավելացնում է, որ «թերևս պետք է միացնել *խափ*, *խուփ* հոմանիշ արմատների հետ»¹⁰: Գ.Ջահուկյանը *խափ* և *խուփ* արմատների քննության ժամանակ կասկածով է կապում դրանք *խարխափեմ*-ի հետ¹¹: *Խարխափեմ* բառի մասին նա խոսում է նաև *շոպեմ/շոպշոպեմ, շոպոեմ,շուպեմ/, շուփ, շփեմ, շաւշափեմ* արմատների կապակցությամբ¹². այս բառերը համեմատվում են *շ/խ* համապատասխանության առումով. ինչ վերաբերում է կրկնությանը, ապա այս բառերը կրկնության նույն տեսակը չունեն. *փ*-ով վերջացող արմատների կրկնության ժամանակ տեղի է ունենում *փ/ւ* անցում (հմմտ. թափել-թաթափել, շուփ-շփեմ-շաւշափեմ), իսկ *խարել* բառի կրկնության ժամանակ առկա է *ր/փ* անցում, ինչպէս *սարսուռ-սարսափ*. այն հատուկ է ոչ միայն բնիկ՝ հ.-ե., այլև ոչ հնդեվրոպական արմատներին (հմմտ. նոր - նոփ-նոր, ճերմակ - ճեփ-ճերմակ, դատարկ - դափ-դատարկ (բարբառներում՝ դարդակ - դափ-դարդակ):

Հայերեն բարբառներում կան *խարխափել* «մոլորվել», *խարխափուն* «անճարակ, խեղճ» իմաստով բառեր:

Խարխափել բայի մասին գրել է նաև Գ. Նիկողոսյանը հայֆիննական լեզվական աղերսներին նվիրված իր ատենախոսության մեջ. հայֆիննաուգրական բառագուգաբանությունների մեջ բերում է նաև հայերեն *խարխափել* և ֆիններեն *haparoida, haroa* «խարխափելով փնտրել», *harhaila* «թափառել», *harhauttua* «մոլորվել», *harhauttaa* «մոլորեցնել», *harha* «մոլորություն, սխալ» համապատասխանությունները¹³: Այստեղ ուշագրավ է ֆիններենի *harhauttaa, harhauttua* բառերի՝ կրկնությամբ կազմված լինելը:

¹⁰ Հ.Աճառյան, ՀԱԲ, հ.2, էջ 562:

¹¹ Գ.Ջաուկյան, *Очерки...*,с. 111.

¹² Գ.Ջաուկյան, *Очерки...*,с. 203.

¹³ Գ. Նիկողոսյան, *Հայֆիննական լեզվական առնչություններ*, (թեկն. ատենախոսություն) Ե., 2011, էջ 168:

ԳՐԱԲԱՐԻ Յ ՆԱԽԱՄԱՍՆԻԿՈՎ ԲԱՅԵՐԸ

Գրաբարի *յ*-ով սկսվող արմատների թիվը, ըստ Հր. Աճառ-
յանի արմատական բառարանի, 250 է: Այդ արմատներից հավաս-
տիորեն հ.-ե. ծագում է վերագրվում միայն 13-ին՝ *յագ, յեռ, յատակ,
յաւ* «ծայր», *յղի, յղով, յիսուն, յորայ, յեղ, յարել, յարմար, յորդ, յորձ* և
յօղ (մյուս արմատները կամ փոխառյալ են, կամ անստույգ
ծագման): Հայերեն արմատների բառասկզբում հանդես եկող *յ*-ն
հ.-ե. *s-ի (*յագ, յեռ*), հ.-ե. *p-ի (*յատակ, յաւ, յղի, յղով, յիսուն, յորայ*),
կամ հ.-ե. *k^u-ի արտացոլումներն են: Միայն չորս արմատ կա,
որոնց հ.-ե. նախաձևերը սկսվում են ձայնավորով, իսկ հայերենում
առկա է *յ*. դրանք են *յարել*՝ հ.-ե. *ar- (այս արմատի մ-ով աճած ձևը՝
յարմար), *յորդ* (*յորձ*) տարբերակային ձևերը՝ հ.-ե. *ordh, և
յօղ (*յաւղ*) արմատը՝ հ.-ե. *audh-: Ոչ արմատական *յ*-ի ծագման մա-
սին ընդունված է կարծիք, որ այն հանգում է հ.-ե. *en «մեջ» նախա-
ձևին և «...համապատասխանում է հին հայերենի *ի* նախդրին, որը
ձայնավորից առաջ գրաված դիրքում ունեցել է *յ* ձևը»¹: Ջահուկ-
յանը գրում է, որ «...երբեմն դժվար է որոշել սկզբնային *յ*-ի բնույթը՝
նրա ածանցական, թե ոչ ածանցական ծագումը. այս դեպքում
պետք է նկատի առնել 1) առանց *յ*-ի ձևերի առկայությունը և 2) բա-
ռերի ստուգաբանությունը»²:

Գրաբարում կան շատ բայեր, որոնց բառասկզբի *յ*-ն արմա-
տական չէ. օրինակ՝ *յականել, յանձնել* (*յանձանձել*), *յանցանել,
յաչաղել, յաղել, յառնել, յերիւրել, յերկուանալ, յարդարել, յանգիլ,
յարմնիլ, յօրինել, յողնիլ* (*ընդողնել* «մեջքի վրա պառկել»): Այս
բայերի քննությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը անվա-
նական արմատներից առաջացած բայեր են՝ *ակն, անձն, աչ, այց,
երիւր, երկու, արդ, օրէն, ողն* և այլն: Այս բառերում *յ*-ն, կարծում
ենք, նախդրային ծագում ունի, այսինքն՝ *յ*-ն իբրև նախդիր կի-
րառվել է այդ գոյականների հետ, հետագայում նախդրավոր ձևե-

¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 244 (այսուհետև՝ ՀԼՊ):

² Նույն տեղում:

րից առաջացել են *յ*-ով բայեր. հմմտ. *ակն-յակն, անկանել-յականել, անձն-յանձն առնուլ, յանձն լինել-յանձնել-յանձանձել, ողն- յողն անկանիլ, յողն երթալ-յողնիլ* և այլն: Քանի որ *յ*-ով այս բայերի կողքին առկա են և արմատական ձևեր, կարելի է որոշ հետևություններ անել *յ*-ի բերած իմաստային նրբերանգների մասին: Որոշ դեպքերում այն բայերին հաղորդում է սաստկականության երանգ. օրինակ՝ *ականել* (դիտել, տեսնել)-*յականել* (դիտել, տեսնել, քաջ նայել)³, իսկ Ռ. Ղազարյանի գրաբարի բառարանում *յականել* բայի բացատրության մեջ նշվում են նաև «ուշադիր նայել, հսկել, աչքը վրան պահել» իմաստները⁴: Նույն դիտարկումը կարելի է անել նաև *արդեմ* և *յարդարեմ* բայերի վերաբերյալ. Հր. Աճառյանը *արդ*-ը բացատրում է «ձև, կարգաւորութիւն»: *Արդ*-ը հանգում է հ.-ե. *art-նախաձևին. հունարենն ունի ἄρτός «կարգաւորութիւն», ἄρτώ, ἀρτόνω «կարգաւորել, պատրաստել, յօրինել, շինել», ἄρτος «յարդարուն»⁵: Հնդեվրոպական լեզուներից միայն հայերենում և հունարենում են պահպանվել «կարգավորել, հորինել» նշանակությունները: Հետաքրքիր է, որ *արդ* արմատից հայերենն ունի *գ-արդ*, իսկ թոյլ. Բ-ում կա ar(t)kye ձևը՝ «հարուստ, թանկարժեք, արժեքավոր» իմաստներով⁶: Հր. Աճառյանը *արդ* բառահոդվածում *արդեալ* բառի բացատրության մեջ գրում է «տաշուած, կոկուած»⁷, այսինքն ինչ-որ ձև տված, իսկ *յարդարել*-ը բացատրում է «ուղղել, կանոնաւորել, կարգաւորել»: ՆՀԲ-ում *արդեմ* բայի համար որպէս առաջին իմաստ նշվում է «հարթել, ձևացուցանել»⁸, իսկ *յարդարեմ* բայի համար՝ «զարդարեմ»⁹: Կարելի է եզրակացնել, որ այն դեպքերում, երբ *յ*-ն ավելանում է անվանական արմատներից առաջացած բա-

3. Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, հ.1, Երևան, 1978, էջ 24 (այսուհետև՝ ՆՀԲ):

⁴ Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 886:

⁵ Զ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 307-308 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁶ J. Pokorny, Indodermanisches etymologisches Wörterbuch, 2. Bern-München, 1959-1969, p. 57:

⁷ ՀԱԲ, հ. 1, էջ 306-307:

⁸ ՆՀԲ, հ. 1, էջ 588:

⁹ ՆՀԲ, հ. 2, էջ 546:

յերին, այն նախդիր է վերջինս բայերին հաղորդել է սաստկակա-
նության իմաստ:

Յ-ն գործածվում է նաև բայարմատների հետ (*ածեմ- յածեմ, անցանեմ-յանցանեմ, արի-յարնեմ, ելանեմ-յելուզակ, աղել-յաղել*)՝ բայերին հաղորդելով իմաստային նոր երանգ. հմմտ. *անցանել* «խաղալ, գնալ, փոխիլ տեղուջէ ի տեղի»¹⁰-*յանցանել* «անցեալ գորինօք, մեղանչել, զանիրաւիլ»¹¹:

Այժմ անդրադառնանք *աղել-յաղել* զույգին: Հայտնի է, որ *աղ* արմատը հանգում է հ.-ե. *sal-«աղ» նշանակությամբ նախաձևին: Նախ անդրադառնանք այս արմատի իմաստներին և հ.-ե. լեզու-
ներում արտացոլված զուգահեռներին: Հնդեվրոպական լեզուների մեծ մասում (հուն. ἄλς, սեռ. ἄλος, լատ. sal, s.lis, հին լատ. sale, հին եկվալ. solъ, հին իռլ. salann, կելտ. sala, կիւր. halen և այլն) այս արմատն ունի «աղ» իմաստը: Որոշ լեզուներում այս արմատից են ծագում «*ծով, ծովի աղ, ծովային* (գոյական), *ձկնորս*» նշանակությամբ բառեր (հմմտ. հին հնդկ. sal-ilá *ծով*, լատ. salēs *ծով, ծովաջուր*, հուն. ἄλιος *ծովային (գոյական), ձկնորս*¹²: Հ.-ե. *sal- արմատից են նաև լիտվ. salti *քաղցրացնել*, salia *քաղցրավենիք*, սլավ. *soldъk-ից հին եկվալ. sladъкъ, լեհ. slodki, որոնցում առկա են *sal-նախաձևի՝ d-ով աճած ձևերը: Հ.-ե. *sal- նախաձևից ծագած արմատների թվում Պոկոռնին նշում է նաև հին պրուսերեն saltan արմատը (speck) «*ճարպ, ճրագու*» նշանակությամբ: Մլավոնական լեզուներում сало բառը նշանակում է 1. «*ճարպ, ճրագու* 2. *բարակ սառույց, սառցասեղների կույտ*»: Մ. Ֆասները сало բառը ուկր. сало, հին ռուս. сало, բուլղ. сало, սերբախորվաթ. сàло, սլովեն. sálô, չեխ. sádlo, սլովակ. sadlo ձևերի հետ կապում է сaди́тъ արմատին՝ բացատրելով՝ «այն, ինչ նստում է մսի վրա» “то, что садится на мясо”¹³: Կարծում ենք, որ այս բացատրությունը այնքան էլ համոզիչ չէ. նախ՝ իմաստային առումով այնքան էլ հավանական չէ *ճարպ*

¹⁰ ՆՀԲ, հ. 1, էջ 248:

¹¹ ՆՀԲ, հ. 2, էջ 518:

¹² Տե՛ս J.Pokorny, նշվ. աշխ., էջ 878-879:

¹³ М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. 3, стр. 550:

իմաստը բխեցնել *նստել* իմաստից, երկրորդ՝ սլավոնական լեզուներին բնորոշ չէ *d – l* անցումը, իսկ չեխերենի *sádlo* և սլովակերենի *sadlo* ձևերը ամենայն հավանականությամբ դրափոխության արդյունք են (հմմտ. *sal-արմատի *d-ով* աճած ձևերը բաթիկ-սլավոնական լեզուներում): Դ. Ուշակովի բառարանում *сало* բառի բացատրության մեջ նշվում է նաև «սննդամթերք՝ աղ դրած խոզի ճարպից» “пищевой продукт из посоленного свиного жира, шпик” (հմմտ. հին պրուսերենի *saltan* բառի՝ Պոկոռնու նշած իմաստը՝ *speck*): Մ. Ֆասսերի բառարանում *сали́ть* բառահոդվածում սլավոնական լեզուներից բերված ոչ մի արմատ չունի «*մսի վրա նստելուն*» վերաբերող որևէ նրբիմաստ: Դ.Ն. Ուշակովի բառարանում *жир* բառի բացատրության մեջ գրված է «*ջրում չտարրալուծվող յուղային նյութ, որ պարունակվում է բուսական և կենդանական հյուսվածքներում*» “нерастворимое в воде маслянистое вещество, содержащееся в растительных и животных тканях“, և բերվում են օրինակներ՝ *гусиний жир, говяжий жир, рыбий жир*. չկա *свиной жир*¹⁴: Նույն բառարանի 4-րդ հատորում *сало* բառի բացատրության մեջ նշվում է “*пищевой продукт из посоленного свиного жира, шпик*”¹⁵: Ուրեմն *сало* ոչ թե առհասարակ յուղ է կամ ճարպ, այլ խոզի՝ աղ դրած ճարպաշերտը: Կարելի է ենթադրել, որ այստեղ դեր է խաղացել խոզի ճարպի (*сало*) պատրաստման եղանակը՝ աղ դրած, աղ արած, քանի որ այն պատրաստվում է խոզի ճարպաշերտը աղով համեմելու միջոցով: Կարծում ենք, որ սլավոնական լեզուների *сало* բառը ևս կարելի է ծագած համարել հ.-ե. *sal- «աղ» արմատից (հմմտ. Յ. Պոկոռնու բառարանում բերված հին պրուս. *saltan speck*): Ֆրանսերենում *salé* (լատ. *sal-ից*) բառը ունի «*աղի*» և «*աղը դրած խոզի միս*» իմաստները¹⁶:

Յ. Պոկոռնու բառարանում հ.-ե. *sal- նախաձևից ծագած արմատների մեջ նշվում է նաև հուն. *ἄλας* բառը՝ «կատակ, սրախո-

¹⁴ **Д.Н. Ушаков**, Толковый словарь русского языка, М., 1935, т. 1, стр.874:

¹⁵ Նշվ. աշխ., հ. 4, էջ 26:

¹⁶ Տե՛ս **К.А. Ганшина**, Французско-русский словарь, М., 1971 г., стр. 714:

սուրբուն, սրամտություն» (գերմ. Witz) իմաստներով¹⁷: Հ.-ե. մյուս լեզուներում ևս *աղ* արմատից ծագած բառերի մեջ հանդիպում են «սրամտություն, սրախտություն» իմաստներով բառեր, կան լեզուներ էլ, որոնցում *աղ* բառը գործածվում է «համ, հետաքրքրություն, սրախտություն» իմաստով: Գրեթե բոլոր լեզուներում (գերմ., հայ., ռուսերեն, ֆրանսերեն) առկա է լատիներենից փոխառված *ատտիկյան աղ* շրջասույթը՝ «նուրբ սրախտություն» իմաստով:

Ռուսերենում *соль* արմատից է *слотить* բառը, որը Վ. Դալը բացատրում է «կատակել, սրախտել, սրամտել»¹⁸: Ֆրանսերենում *sel* բառի համար իբրև երկրորդ իմաստ նշվում է «*սրամտություն*»¹⁹, իսկ ռուս-ֆրանսերեն բառարանում *սրամտություն* բառի դիմաց տրված է *sel* (աղ)²⁰:

Հայերենում ևս *աղ* բառը ունի «*համ, ախորժեղիություն*» իմաստը (Խօսածիղ մեջ աղ չկա)²¹: Հայերենի համար հատկապես նշելի է *անալի* բառը՝ «*անհամ՝ անախորժ կատակ՝ սրախտություն*» իմաստով²²:

Հ.-ե. *sal- նախածնը հ.-ե. լեզուներում արտացոլված է նաև «կեղտ, կեղտոտ, գորշ» իմաստներով:

Յ. Պոկոռնին հ.-ե. *sal- արմատի երկրորդ ձևը՝ *sal- բացատրում է «կեղտոտ, գորշ» (Schmutziggrau) ըստ գույնի, նաև ըստ նշանակության՝ *աղ* և բերում է sal-սօ-, salo- «գորշ՝ կեղտոտ գույն» իմաստներով. հինդկ. s.ra-, s.la- «գորշ», անգլլասաքս. söl «կեղտոտ», հին իռլ. sal և sa(i)le «կեղտ», salach «կեղտոտ», հին իսլ. sölur «կեղտ», հվգերմ. salo «պղտոր, մոայլ (գույն), գորշ գույնի», մվգերմ. sal, սեռ. salwes «կեղտ»²³:

¹⁷ Յ. Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 878:

¹⁸ В. Даль, Толковый словарь живого великорусского языка, т. IV, стр. 223:

¹⁹ К.А. Ганшина, Французско-русский словарь, 1971, էջ 776:

²⁰ Д.В. Сеземан, Русско-французский словарь, М., 1959, стр. 396:

²¹ Տե՛ս Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Ե., հ. I, 1944, էջ 36:

²² Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 20:

²³ Յ. Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 879:

Սլավոնական լեզուներում ևս соль արմատին են հանգում sóлоть, слоть, слотина «ցեխ, կեղտ, слякоть, вязкое жидкое, кислое и стоячее болото»: Վ. Դալի բառարանում слотить բառի համար նշվում են նաև «կեղտոտել, грязнить, пачкать» իմաստները²⁴: Ֆրանսերենում sale նշանակում է նաև «անմաքուր, կեղտոտ», նաև «անվայելուչ»²⁵. (հմմտ. ռուս. сальный “непристойный”):

Հայերենում աղ բառը ունի նաև աղտ և աղծ՝ տ-ով և ծ-ով աճած ձևեր²⁶, ընդ որում աղծ-ի մասին Աճառյանը գրում է, որ այն առանձին չի գործածվում, այլ միայն աղծեալ ձևով, որ նշանակում է «աղ դրած»²⁷, իսկ աղտ-ի մասին գրում է, որ «...գործածուած է միայն տեղ ցոյց տվող մի քանի անունների մէջ, ինչ. Ծով աղտից, Քաղաքք աղտիցն, Ի հովիտս աղտիցն, Ձոր աղտից»²⁸, իսկ ՆՀԲ-ում՝ նաև «ջրհորք նաւթի»²⁹:

Կարծում ենք, որ հայերենի աղտ «կեղտ» իմաստով բառը ևս կարելի է ծագած համարել հ.-ե. *sal- աղ արմատից, մանավանդ եթե նկատի ունենանք հ.-ե. մյուս լեզուներում պահպանված արմատները: Հայերենի աղտ «կեղտ» իմաստով արմատը Հր. Աճառյանը համեմատում է հուն. ἄρδα «աղտ, կեղտ, անմաքրութիւն» արմատի հետ և գրում է, որ այս արմատը հայերենում պետք է արտացոլվեր իբրև *արտ, իսկ հայերենն ունի աղտ՝ ր→ղ, որը հայերենի համար օրինաչափ չէ³⁰: Գ. Ջահուկյանը ևս այս արմատի մասին խոսելիս անբացատրելի է համարում հայ. դ – հուն. ρ համապատասխանությունը³¹: Ամենայն հավանականությամբ այս ստուգաբանությունը այնքան էլ հավաստի չի կարելի համարել, մանավանդ որ հ.-ե. այլ լեզուներում, բացի հունարենից, զուգահեռներ չկան: Իսկ աղ արմատից կարող էր աղտ ձևը ծագել. այս դեպքում

²⁴ В. Даль, նշվ. աշխ., հ. 4, էջ 223:

²⁵ К.А. Ганшина, Французско-русский словарь, 1971, էջ 764:

²⁶ Տե՛ս, ՀԱԲ, հ. I, էջ 132, 136 և ՀԼՊ, էջ 146:

²⁷ ՀԱԲ, հ.1, էջ 132:

²⁸ Նույն տեղում, էջ 136:

²⁹ ՆՀԲ, հ. I, էջ 44:

³⁰ ՀԱԲ, հ. I, էջ 136:

³¹ ՀԼՊ, հ. I, էջ 169:

բառի և՛ հնչյունական, և՛ իմաստային կողմը որևէ դժվարություն չի ներկայացնում: ՆՀԲ-ում *աղտ* բառի իմաստների մեջ նշվում է նաև «անմաքուր ինչ, ցեխ, տիղմ»³² (հմմտ. ռուս. сѡлотъ, сѡта, слотъ “смякоть, жижа” բառերի հետ):

Այսպիսով, հ.-ե. *sal- «աղ» նախաձևը ինչպես հ.-ե. մյուս լեզուներում, այնպես էլ հայերենում ունի և՛ «*աղ*», և՛ «քաղցր» (հայ. *աղու*), և՛ «ծովային» (*աղտաղտուկ*, որը ՆՀԲ-ում³³ բացատրվում է «աղի և ծովային վայր, երկիր աղի և խոնաւ»), և՛ «կեղտ՝ անմաքրություն», և՛ «սրամտություն, սրախտություն» իմաստները:

Աղ արմատից հայերենում կան *աղել* «աղ անել», կրկնությամբ՝ *աղաղել* բայերը: *Աղաղել* բայը ՆՀԲ-ում ունի «*աղելով աղել, յաղաղ դնել*» բացատրությունը³⁴: *Աղել* բայից բացի՝ հայերենում կան նաև *յաղաղել*, որն ունի ոչ այնքան «*աղ անել*», որքան «*համեղացնել, աղով համեմել*» իմաստը: Հիշենք «եթե աղն անհամեացի, ի և համեմեացի»³⁵:

Յ-ն, հայերենի բայական արմատներից առաջ դրվելով, այդ բայերին հաղորդում է նոր իմաստ և այս դեպքում ակնհայտորեն ածանցական կիրառություն ունի:

³² ՆՀԲ, հ. I, էջ 44:

³³ Նույն տեղում:

³⁴ ՆՀԲ, Ե., 1979, հ. I, էջ 32:

³⁵ ՆՀԲ, Ե., 1979, հ. I, էջ 31:

ՀԱՅԵՐԵՆԻ Հ.-Ե. ԾԱԳՄԱՆ Զ- ՆԱԽԱՄԱՍՆԻԿՈՎ ԲԱՅԵՐԸ

Հնդեվրոպական լեզվաբանության ժամանակակից փուլը, ինչպես և սպասելի էր, լեզուների ուսումնասիրության նպատակներով, արծարծված հարցերի շրջանակով, հետազոտական մեթոդներով տարբերվում է նախորդ փուլերից: Ներկայումս հնդեվրոպաբանների ուշադրության կենտրոնում են հ.-ե. առանձին լեզուների՝ հնդեվրոպական ընդհանրության շրջանից եկող առանձնահատկությունների համակարգային քննությունը, լեզուների կառուցվածքային միավորների հետագա զարգացման ընթացքը, զարգացումների ժամանակ ի հայտ եկած նմանությունները, դրանց հիմքերը և հատկապես տիպաբանական ընդհանրությունների բացահայտումը: Եվ պատահական չէ, որ Վ.Վ. Իվանովը գրում է. «Ժամանակակից պատմահամեմատական լեզվաբանության հիմնական տարբերությունը այդ գիտության զարգացման նախորդ փուլերից կողմնորոշումն է դեպի լեզուների ընդհանուր տիպաբանությունը»¹:

Փոխվել են պատկերացումները հ.-ե. արմատի և բառի կառուցվածքի մասին: Այստեղ մեր նպատակից դուրս համարելով անդրադառնալ հ.-ե. բառի կառուցվածքի և բաղադրիչների վերաբերյալ հնդեվրոպաբանության մեջ եղած բոլոր կարծիքներին՝ նշենք միայն, որ այս խնդիրը ևս ժամանակակից շրջանում տարբեր մեկնաբանություններ է ստացել:

Հնդեվրոպաբանության մեջ երկար ժամանակ տիրապետող էր այն կարծիքը, որ հ.-ե. լեզվին բնորոշ չէ նախամասնիկավորումը. հիշենք հ.-ե. բառի կառուցվածքի բենվենիսոյան տեսությունը, Ա. Մեյեի այն պնդումը, որ «հնդեվրոպական լեզվում չկան նախամասնիկներ»²:

¹ **Вяч. Вс. Иванов**, Современное индоевропейское сравнительно-историческое языкознание, “Новое в зарубежной лингвистике”, М., 1988, вып. XXI, с. 5.

² **А. Мейе**, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, стр. 17.

Ն. Տրուբեցկոյը հայտնում է այլ կարծիք. խոսելով որևէ լեզվի՝ հ.-ե. լեզվաընտանիքին պատկանելու հատկանիշների մասին՝ նա որպես երրորդ՝ ձևաբանական հատկանիշ, նշում է, որ «պարտադիր չէ բառի՝ արմատով սկսելը: Առանց նախածանցների հ.-ե. լեզուներ գոյություն չունեն: Նույնիսկ առավել հին հ.-ե. լեզուներում կան նախածանցներ, այսինքն՝ այնպիսի ձևույթներ, որոնք հանդես են գալիս միայն հաջորդող արմատի կազմում և երբեք չեն գործածվում որպես ինքնուրույն բառեր... Ուշ շրջանի հ.-ե. լեզուներում այդպիսի նախածանցների թիվը ավելանալու հակում ունի»³:

Համանման կարծիք է հայտնում և Ժ. Օդրին «Հնդեվրոպական լեզուն» աշխատության մեջ. ի թիվս այլ խնդիրների՝ նա անդրադառնում է նաև հ.-ե. ձևաբանության հարցերին, մասնավորապես բառ, հիմք, արմատ և բառակազմական բաղադրիչներ հարաբերակցությանը: Ժ. Օդրին նշում է. «Արմատ հասկացությունը գործառական և համաժամանակյա հասկացություն է: Այն (արմատը-Ն.Ս.) լեզվի տվյալ վիճակի ձևաբանական վերլուծության ամենաբարձր բառային միավորն է: Արմատները, ինչպես և ածանցները փոփոխվում են տարրալուծման, նոր մեկնաբանությունների, երբեմն նաև միացման կամ կցման հետևանքով»⁴: Նա հավելում է նաև. «... սովորաբար կարծում են, որ հ.-ե. լեզվում նախածանցներ չեն եղել: Դա սխալմունք է: ... Արմատները կարող են պարունակել հին նախածանցներ»⁵:

Ժ. Օդրին բերում է լատիներենի *pōn* արմատի օրինակը. այն կազմված է **po-sinō* (*po-*ն հին նախածանց է) ձևից, դարձել է *pōnō* և կորցնելով կապը *sinō* արմատի հետ՝ ստացվել է վերը նշված *pōn* ձևը⁶: Ժ. Օդրիի նշած այս օրինակը եզակի դեպք չէ: Տարբեր լեզուներից կարելի է բերել այլ օրինակներ, երբ արմատներին

³ Н.С. Трубецкой, Мысли об индоевропейской проблеме, ВЯ, 1958, № 1, стр. 71:

⁴ Ж. Одри, Индоевропейский язык, Новое в зарубежной лингвистике, М., 1988, Вып. XXI, стр. 39:

⁵ Նույն տեղը, էջ 41:

⁶ *St' u* նույն տեղը, էջ 39:

ավելանում են բառակազմական զանազան մասնիկներ՝ նախածանց, միջածանց, վերջածանց, աճական, և դրանք հաճախ այնպես են ձուլվում արմատին, որ միայն ստուգաբանական վերլուծության միջոցով է վերականգնվում պարզական արմատը: Նման ձուլման օրինակներ կարելի է բերել լեզուների զարգացման տարբեր շրջաններից (օրինակ՝ հայ. նստիմ, ռուս. здоровый (հին սլավ. *szdorъ, որը կազմված է sz (համապատասխանում է հին հնդկ. su- «լավ») և *dorvo «ծառ» («дерево» բառի՝ ձայնավորի հերթագայությանը տարբերակ է, և նշանակում է «լավ ծառից սարքված»):

Է. Մակաևը, անդրադառնալով հ.-ե. բառի և արմատի կառուցվածքի, բառի բառակազմական բաղադրիչների հարցին և համեմատելով հ.-ե. տարբեր լեզուների և գերմանական լեզուների ընձեռած նյութը, նույնպես հանգում է այն եզրակացության, որ ընդհանուր հնդեվրոպական լեզվում, անտարակույս, գոյություն են ունեցել նախածանցավոր կազմություններ⁸:

Է. Մակաևը բերում է օրինակներ հ.-ե. տարբեր լեզուներից, որոնցում նույն արմատները հանդիպում են տարբերակային ձևերով՝ բառակազմի դիրքում հանդես բերելով r/qrn, n/qrn, g/qrn հերթագայություններ. օրինակ՝ հին սլավ. kostъ – հուն. ὄστρεόν*, հին սլավ. koleno – լատ. ulna, հուն. κόρυον– հուն. ἄρουα «ընկույզ», ռուս. коза – հինդկ. ajā, միջին պրսկ. azak «այծ», հուն. κάναδος– հուն. ἄναδος «աճուխ» և այլն⁹: Ինչպես երևում է բերված օրինակներից, նույն արմատի նախածանց-նախամասնիկով ձևեր հանդիպում են ինչպես տարբեր լեզուներում, այնպես էլ նույն լեզվում:

Է. Մակաևը քննության առարկա է դարձնում հատկապես շարժական s-ի (s- mobile) խնդիրը և բերում s-ով և առանց s-ի արմատի տարբերակներ հ.-ե. լեզուներից: Մակաևը, հենվելով հ.-ե. լեզուներից և գերմանական լեզուներից բերված նյութի վրա, եզրա-

⁷ Տե՛ս **Մ. Բասմեր**, Этимологический словарь русского языка, М., 1967, т. II, стр. 90.

⁸ Տե՛ս **Է. Մախաև**, Структура слова в индоевропейских и германских языках, М., 1970, стр. 271:

* Լատիներենում առկա են և՛ k-ով՝ costma «կողոսկր» և առանց k-ի os, ossis «ուկոր» արմատները (հմմտ. նաև հայ. ոստղ և կոստղ):

⁹ Տե՛ս **Է. Մախաև**, նշվ. աշխ., 267-268:

կացնում է, որ «շարժական s-ը (s- mobile), որը կարող է ունենալ արտահայտության տարբեր ձևեր, կարելի է վերագրել ինչպես ընդհանուր հնդեվրոպական, այնպես էլ ընդհանուր գերմանական լեզվավիճակի տարբեր շրջաններին, նույնիսկ ավելին. այն կարող է վերագրվել նաև հարաբերականորեն ավելի ուշ շրջանի և ներկայացված լինել ժամանակակից բարբառներում»¹⁰: Նա եզրակացնում է, որ «... շարժական s-ը հնդեվրոպականում և գերմանական լեզուներում մեկուսացված երևույթ չի եղել, այն պետք է դիտարկել բառասկզբում հերթագայվող այլ տարրերի հետ ունեցած կապի մեջ, տարրեր, որոնք լավագույնս կարող են բացատրվել որպես երբեմնի իմաստակիր միավորներ, որոնք աստիճանաբար ենթարկվել են իմաստային «հողմնահարման»՝ մասամբ պահպանվելով իբրև ազատ տարբերակներ, մասամբ էլ, ձուլվելով արմատին, վերածվել են պարզ կառուցվածքի: Շարժական s-ի հերթագայությունը կենդանի գործընթաց է եղել ինչպես հնդեվրոպականում, այնպես էլ գերմանականում»¹¹:

Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ, խոսելով վաղնջահայերենի՝ որպես ինքնուրույն լեզվի կառուցվածքային միավորների մասին, անդրադառնում է նաև նախածանցավոր կազմությունների՝ վերջիններս բաժանելով երկու խմբի՝ 1) «կազմություններ, որոնց նախածանցները գործել են միաժամանակ որպես նախդիրներ, և 2) այլ կազմություններ, որոնք գերազանցապես ժառանգվել են պատրաստի ձևով»¹²: Նախածանցների մի մասը հետագայում արդեն դադարել է գործուն լինելուց, ինչպես գ-, նի-, տ-, իսկ մյուսների բառակազմական գործառույթը շարունակվել է նաև զարգացման հետագա շրջաններում, ինչպես ան-, առ-, ընդ-:

Այստեղ քննության կառնենք հայերենի գ- նախահար հնչյունով կազմությունները: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի:

¹⁰ Նույն տեղում, էջ 252:

¹¹ Նույն տեղում, էջ 253:

¹² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 243 (այսուհետև՝ ՀԼՊ):

Առաջին խմբի մեջ կրնդգրկվեն այն բառերը, որոնցում գ-ն ավելանում է անմիջապես արմատին, ինչպես արմ-/գարմ, արգ-/գարգ, արդ-/գարդ, աչացու-գաչացու, գալ-գգալ, գնալ-գգնալ և այլն:

Երկրորդ խմբի մեջ կմտնեն այն բառերը, որոնցում բառասկզբի գ-ից հետո կա բառակազմական այլ մասնիկ. օրինակ՝ *զանգէտ, զանխուլ, զառանցանէմ, զառածանէլ, զառաջէլ, զարտուդէլ* և այլն: Այս խմբի բառերի գ-ն ակնհայտորեն ավելի ուշ շրջանի հավելում է:

Զ-ով սկսվող բառերի մեջ մեծ թիվ են կազմում բայերը: Զ-ով սկսվող բայերի մեջ կան այնպիսիք, որոնց առանց գ-ի ձևերը գործածական չեն, ինչպես *զգածիլ, զերծ, զերծանէլ, զերծող, զարդարէմ, զբաղիլ*, թերևս նաև *զգէնուլ (զգեստ)*. այս վերջինների առանց գ-ի ձևերը, առանց իմաստային տարբերության (*զէնուլ, գէստ*), հանդիպում են հայ բարբառներում:

Զ-ով սկսվող բայերի մի մասում գ-ով ձևերը իմաստային տարբերություններ են դրսևորում պարզական արմատներից: Իմաստային տարբերություններն էլ զանազան են. մի դեպքում գ-ով ձևերը ունեն սաստկանության երանգ, որոշ դեպքերում էլ գ-ն նոր, ոչ սաստկական իմաստ է հաղորդում բային:

Զ-ն սաստկական երանգ է հաղորդում ականեմ-զականեմ, արկանեմ-զարկանեմ, ընկենում-զընկենում, իջանեմ-զիջանեմ, գնալ-զգնալ, արդեմ-զարդարեմ, փախչիմ-զփախչիմ, նստիմ-զնստիմ, հեղում-զեղում, կծիմ-զկծիմ, գետնել-զգետնել, գայոիլ-զգայոիլ, չարանալ-զչարանալ, փածանիմ-զփածանիմ (սփածանիմ) և այլ բայերի:

Կան բայեր էլ, ինչպես նշվեց վերը, որոնց գ-ով ձևերը նոր, ոչ սաստկական իմաստ են արտահայտում:

Անդրադառնանք այդ բայերից մի քանիսին:

Գլխեմ բայը հղվում է գլխաւորել բային և բացատրվում «ի գլուխ հանել, բովանդակել, կատարել»¹³, իսկ զգլխել-ը բերվում է

¹³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Ե., 1979, էջ 560, (այսուհետև՝ ՆՀԲ):

զգլխել գինով բառակապակցության մեջ և բացատրվում «գինեհարիլ, գինին գլուխը զարնել»¹⁴:

Արմանամ բայը և՛ ՆՀԲ ում, և՛ գրաբարի այլ բառարաններում (օր.՝ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանում») հղվում է *զարմանամ* ձևին:

Հր. Աճառյանը արմանալ/զարմանալ բայը կապում է արմ-«արմատ» արմատին հ.-ե. *r- նախաձևից՝ -մ կամ -մն մասնիկով¹⁵:

Արմանալ/զարմանալ բայերի և արմատ բառի իմաստային կապի բացատրության համար Աճառյանը բերում է աշխարհաբարյան *փայտ կտրիլ* «սաստիկ զարմացած մնալ» գուգահեռը¹⁶: ՆՀԲ-ում *զարմանամ* բառի համար բերվում են «արմանալ յոյժ, ապշիլ ընդ անակնկալ իրս մեծամեծս, հիանալ, սքանչանալ» իմաստները¹⁷: Առաջին հայացքից անհավանական թվացող իմաստային այս անցումը (արմ-ատ→զարմանալ→հիանալ, սքանչանալ) գուգահեռներ ունի հ.-ե. այլ լեզուներում: Բաքի՝ հ.-ե. լեզուների հոմանիշների բառարանում «զարմանալ, զարմանք» բառահողվածում բերվում են հ.-ե. տարբեր լեզուներում վկայված բառեր, որոնցում, ինչպես զրում է հեղինակը, «զարմանալ» բառը կապվում է «ապշել, կոշտ, կարծր, ամուր» նշանակությամբ արմատների հետ (հմմտ. հայ. արմատ և զարմանալ) և նշում է, որ շատ լեզուներում «զարմանք, զարմանալ» իմաստով բառերից են ծագում «հիանալի, հրաշալի, սքանչելի» նշանակությամբ բառերը: Բաքը բերում է օրինակներ հ.-ե. լեզուներից. օր. լատ. ad-miratio «զարմանք», ad-mīror «զարմանալ» և mīrus «զարմանալի, սքանչելի, հիանալի», նոր իռլանդերեն iongantás «զարմանք» և iongnadh «հրաշալի», նոր անգլերեն wonder «զարմանք, զարմանալ», wonderfull «հրաշալի», միջին վերին գերմաներեն Wunder «հրաշք, հրաշալիք» և այլն¹⁸:

¹⁴ Նույն տեղում, էջ 727:

¹⁵ Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ. I, էջ 327, (այսուհետև՝ ՀԱԲ):

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ ՆՀԲ, հ. I, էջ 721:

¹⁸ Տե՛ս **C.D. Buck**, A Dictionary of selected synonyms in the principal Indo-European Languages, Chicago, 1949, էջ 1093-1094:

Ուշագրավ են նաև այն օրինակները, որ բերվում են բալթիական լեզուներից. օրինակ՝ լիտվերենում *nusistebėjimas, nustebimas* «ապշել, զարմանալ» բառերը նախապես նշանակել են «փայտացած, քարացած, կոշտ» և ծագել են *stiebas* «կայս, սյուն, ցից» արմատից¹⁹ (հմմտ. *остолбенеть*):

Եռամ բայը ունի «եռալ, եփուիլ», իսկ *զեռալ*-ը՝ «սաստիկ եռալ, վիստալ, յուզուիլ» իմաստները²⁰: ՆՀԲ ում եռամ բառի համար բերվում են «ի ջերմութենէ յուզուիլ, պղպջիլ, զայրանալ»²¹, իսկ *զեռալ*-ի բացատրության մեջ՝ «սաստիկ եռալ, այսինքն շարժիլ որպես սողիլ ՚ի վերայ Երկրի»²²: *Ջեռալ* ձևի մեջ գ-ն իսկապես սաստկական երանգ է հաղորդում բառին, իսկ *զեռուն* բառի իմաստը համահունչ է ՆՀԲ-ի բացատրությանը:

Հր. Աճառյանը *եռալ* բառահոդվածում բերում է նաև բարբառային *եռու* «զայրույթ» բառը, թերևս կարելի ավելացնել նաև բարբառային *հերս* «զայրույթ», *հերստել* «զայրանալ»: Պետք է նշել, որ այս դեպքում ևս եռալ→եռս (եռալ-զայրույթ) իմաստային անցումը գուցա հեռներ ունի հ.-ե. լեզուներում:

Կ. Բաքի բառարանում *boil* «եռալ» նշանակությամբ բային նվիրված է երկու բառահոդված. առանձնացվում են դրանք անցողականության և անանցողականության հատկանիշով:

Boil անցողական բային նվիրված բաժնում նշվում են *հայ. եփեմ* և *հուն. εΨω* միայն «եռացնելով եփել» իմաստով բայերը²³: Հետաքրքրական է, որ այս բաժնում նշված հ.-ե. մյուս լեզուներից բերված օրինակներում չկան «զեռալ, վիստալ, զայրանալ» նշանակությամբ բայեր:

Boil անանցողական բային նվիրված բաժնում բերվում են հունարեն *ξέω*, որն ըստ հին հունարենի բառարանի ունի «եռալ, խլիխլալ (*бурлить, клокотать*), հուզվել, անհանգստանալ,

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 1095:

²⁰ ՀԱԲ, հ. II, Ե., 1973, էջ 29-30:

²¹ ՆՀԲ, հ. I, էջ 661:

²² Նույն տեղում, էջ 732:

²³ Տե՛ս **Buck**, նշվ. աշխ., էջ 338:

զայրանալ» իմաստները²⁴, լատիներեն *fervere* «եռալ, վխտալ, փոթորկել, հուզվել, բորբոքվել», սանսկրիտ *kup-* «հուզվել, գրգռվել, զայրանալ», ռուս. *kipet*^c, եկեղեցալավոներեն *kyrēti* և այլն²⁵:

Եկեղեցալավոներենի ձևի համար «Հին ռուսերենի բառարանում» *кыпѣти* բառի բացատրությունների մեջ բերվում են «1. եռալ, խլթալթալ, 2. բխել, ցայտել, 3. լցված՝ լի լինել ինչ-որ բանով, 4. համակվել որևէ զգացումով» իմաստները, և հետաքրքիրն այն է, որ այս վերջին իմաստի համար բերված բնագրային բոլոր օրինակներում նշվում են «չարությամբ, կատաղությամբ լցված լինել» իմաստները. *кыпѣл не обличною злобью, лютостью же мн(о)гоу кыпѣ*²⁶ և այլն, որոնք իմաստային առումով ակնհայտորեն մոտ են հ.-ե. մյուս լեզուների «զայրանալ» նշանակությամբ բառերին: Վ. Դալի բառարանում *кипеть* բայի բացատրությունների մեջ տրվում են նաև *волноваться, кишеть* իմաստները, ինչպես նաև բերվում է «Он кипит злобью, мстью»²⁷ օրինակը:

Հնդեվրոպական լեզուներից բերված այս օրինակները ցույց են տալիս, որ «եռալ» նշանակությամբ բայերը, անկախ այն բանից, թե հ.-ե. որ նախաձևին են հանգում, ոչ միայն հայերենում, այլև հ.-ե. այլ լեզուներում ունեցել են ինչպես «վխտալ», այնպես էլ «զայրանալ, զայրույթ» իմաստային անցումները:

Չ-ն սաստկական իմաստ է հաղորդում նաև *ընկենուլ* «ձգել, նետել, վայր գցել» բային, որի *զընկենուլ* ձևը «մի կողմ գցել՝ նետել, գետնովը տալ» նշանակություններից բացի ունի նաև «մերժել, արհամարհել» իմաստները²⁸:

Համանման իմաստային անցումներ են առկա նաև սլավոնական լեզուներում:

²⁴ Տե՛ս *И.Х. Дворецкий*, Древнегреческо-русский словарь, М., 1958, стр. 734:

²⁵ Տե՛ս *Buck*, նշվ. աշխ., էջ 676-677:

²⁶ Տե՛ս *И.Х., Дворецкий* Словарь древнерусского языка (XI–XIV вв.), том IV, 1988-1991 гг., стр. 384-385 (այսուհետև սույն բառարանից հղումները կտրվեն շարադրանքում՝ նշելով հատորը և էջը):

²⁷ *В.И. Даль*, Толковый словарь живого великорусского языка, М., 1979, т. II, стр. 109.

²⁸ Տե՛ս *Ռ. Ղազարեան*, Գրաբարի բառարան, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 440:

Մ. Ֆասմերի բառարանում *метать* բառահոդվածում բերվում են լիտվ. *mėtau, mėtyti*. «զգել, նետել», լատիշ. *mētaāt* «զգել», բուլղ. *мятам* «զգել, նետել», ինչպես նաև չեխ. *zamitati* «մերժել, հերքել», լեհ. *romiatac'* «զգել այստեղ-այնտեղ, արհամարհանքով վերաբերվել» ձևերը²⁹:

Ռուսերենի *метать* «զգել, նետել» բայի *за-ով` заметать* բային նվիրված բառահոդվածում Վ. Դալը բերում է նաև “не замечывайся” օրինակը` *не зазнавайся* «մի՛ մեծամտանա, մի՛ արհամարհիր» նշանակությամբ³⁰, իսկ *изметать* բառահոդվածում բերում է *изметный* բառը “выкидной, негодный” նշանակությամբ³¹:

Աղանել բայը հայերենում ունի «տեսնել, նկատել» իմաստները, իսկ *զաղանել-ը*` «լավ նայել, դիտել»: Սլավոնական լեզուներում ևս *смотреть* «նայել» բայն ունի առանց *с-ի* ձևեր` եկեղեցաւլավ. *мотрити*, բուլղ. *мóтря* «նայում եմ» ռուսերեն բարբառային *мотреть* «նայել», սերբոխորվաթ. *мòтрити, мòтрѹм*` նույն «նայել» նշանակությամբ: Ֆասմերը գրում է, որ *смотреть* բառը նախասլավոներենի **motriti* ձևից է առաջացել` միանալով *съ-* նախածանցի հետ (*съ-* նախածանցի մասին վերը արդեն նշվել է, որ այն ունի «լավ» իմաստը, ուրեմն *смотреть* ձևը նշանակել է «լավ նայել»³²:

Չ-ով սկսվող հայերեն բառերը, ինչպես նշում է Հր. Աճառյանը, «կա՛մ փոխառութիւն են և կամ դեռ մեկնուած չեն, ուստի յայտնի չէ, թէ ի՛նչ պիտի լինէր սրա հնիս. ձևը: Մակայն որովհետև հնիս. *g'h* երկու ձայնավորի միջև տալիս է հայերեն *q* և բառի սկզբում տալիս է *hյ. ձ*, իսկ *ձ* դառնում է բաղաձայնի մօտ *q*, ուստի կարելի է ենթադրել, որ *q* ձևն էլ ծագել է հնիս. *g'h-ից*»³³:

Գ. Ջահուկյանը, խոսելով հ.-ե. ծագում ունեցող նախածանց/նախդիրների մասին, հին հայերեն *q-ն* (վաղնջահայերեն **jō* միջին

²⁹ Տե՛ս **Մ. Ֆասմեր**, նշվ. աշխ., էջ 609:

³⁰ **В.И. Даль**, նշվ. աշխ., հ. I, էջ 602:

³¹ Նույն տեղում, էջ 26:

³² **Մ. Ֆասմեր**, նշվ. աշխ., հ. III, էջ 692:

³³ **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հ. II, էջ 75:

օղակով) հանգեցնում է հ.-ե. *g'hō «հետևում, հետո, համար» նախաձևին³⁴:

Ե՛վ Հր. Աճառյանը, և՛ Գ. Ջահուկյանը զուգահեռներ են անցկացնում հայերենի *q* նախդիր/նախածանցի և սլավոնական լեզուների ձ-ի միջև: Սլավոնական լեզուներում ևս ձ-ն և՛ նախդիր է, և՛ նախածանց, ինչպես հայերենի *q*-ն. երկուսն էլ կարող են գործածվել որպես հոլովակազմիչ. հայ. *q*-ն դրվում է բառասկզբում հայցական, գործիական, պարառական հոլովների կազմության ժամանակ: Ռուսերենում ձ-ն գործածվում է սեռական, հայցական, գործիական հոլովների հետ: Բայց դրանց գրության միջև առկա են տարբերություններ. սլավոնական լեզուներում իբրև նախդիր գործածվող միավորները (ձ, ыз և այլն) անջատ գրություն ունեն, իսկ նախածանցային կիրառության ժամանակ դրվում են բառասկզբում՝ գրվելով միասին:

Հայերենում *q*-ն և՛ իբրև նախդիր, և՛ իբրև նախածանց գործածվելիս գրվում է բառերին միացած: Այն դեպքերում, երբ *q*-ն գործածվում է անվանական արմատների հետ, այն նախդրային կիրառություն ունի. հմմտ. *զկնի, զհետ, զի, զվէ՞, զայգոյ, զառաւօտու* և այլն: Որոշ դեպքերում *q*-ն, բայերի հետ գործածվելով իբրև նախդիր, կազմել է *q*-ով գոյականներ. հմմտ. զրկել զայլս – զայլազրկութիւն, զայլոցկերութիւն և այլն: Բայարմատների սկզբում հանդես եկող *q*-ն արդեն ածանցական կիրառություն ունի և որոշակի իմաստային նրբերանգներ է հաղորդում բայերին:

Ռուսերենի ձ և ыз նախդիր/նախածանցները հանգեցվում են հ.-ե. տարբեր նախաձևերի՝ ձ-ի համար՝ հ.-ե. *g'hō, իսկ ыз-ի համար՝ *eg'hs³⁵:

Պետք է նշել, որ իբրև նախդիրներ դրանք ունեն իմաստային և կիրառական տարբերություններ, բայց իբրև նախածանցներ հաճախ կարող են հանդես գալ իբրև տարբերակներ: Ռուսերենում կան ձ և ыз նախածանցներով շատ բայեր, որոնք իմաստային

³⁴ Գ. Ջահուկյան, ՀԼՊ, էջ 75:

³⁵ Sli u J. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, Ber, 1959, էջ 451, էջ 292:

տարբերություններ չեն դրսևորում. օրինակ՝ задъхн/оутисА (հ. III, էջ 298) – издъхн/оутисА (հ. III, էջ 503), երկուսի համար էլ տրվում է նույն՝ задохнуться բացատրությունը. այսպիսի օրինակները շատ են. загънати (հ. III, էջ 296) – изгънати (հ. III, էջ 499), запи/сати (հ. III, էջ 334), – изпи/сати (հ. IV, էջ 61), заме/тати (հ. III, էջ 324)-изме/тати (հ. IV, էջ 38) և այլն: Կարծում ենք, որ հայերենի նախածանց *q*-ն զուգադրելի է ռուսերենի *из*-ին: Ֆասմերի բառարանում ռուսերենի *из*-ի՝ սլավոնական այլ լեզուներից բերված զուգահեռներում առկա են նաև առանց *з*-ի տարբերակներ. ուկր. *из*, *з*, *з*էլւ. *z*, *ze*, սլովակ. *z*, *zo*, լեհերեն *z*, *ze*, ներքին և վերին լուծիերեն *z*, *s*³⁶:

Բացի այդ՝ հին ռուսերենի *из*-ով կազմված ձևերից են կազմվում *с*-ով ձևերը. հմմտ. *из дѣла/ти* (հ. III, էջ 504), – *сделать*, *изжечи–сжечь*, *изжечисА* – *сгореть* (հ. III, էջ 505), *изгор/ѣти* – *сгореть* (հ. III, էջ 496), *изгни/ти–сгнить* (հ. III, էջ 494), *изчита/ти–считать* (հ. III, էջ 129): *За*- նախածանցով կազմված և ոչ մի բառ *с*-ով ձևեր չունի: Ռուսերենի նույն արմատից կազմվում են և՛ *за*, և՛ *из* նախածանցներով ձևեր՝ *лог*– *залог* և *излог*, բայց *излогь*- ձևից են կազմվում *слогь*, *слагать* բառերը:

Հայերենի *հ*-*ե*. ծագման *ը*-ով սկսվող արմատների *հ*-*ե*. ձևերը ունեն *е*- այդ արմատներն են *ընդեր-ք* (հնիւ. *entero-), *ընծայ* (հնիւ. *eng hə-ti-), *ընթանամ* (հնիւ. *senth), *ընկենում* (հնիւ. *sengu-), այսինքն՝ *հ*-*ե*. **e*→հայերեն *ը*: Ըստ որում որոշ բառերում *ը*-ն կարող է չգրվել, ինչպես ըստ նախածանցի դեպքում: Գ. Ջահուկյանը գրում է. Որպես նախածանց գրվում է ոչ միայն *ըստ*-, այլև առանց *ը*-ի՝ *ստ* ձևով՝ (ը)ստանձնեմ, (ը)ստգիտ, (ը)ստգտանեմ, ստգիտել, (ը)ստերիւրեմ...³⁷:

Հայերենի *զ*-ով սկսվող բառերում, որոնցում *զ*-ն դրվում է բաղաձայնից առաջ, բառասկզբի *զ*-ն արտասանվում է թույլ *ը*-ով:

Վերը բերվածը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ հայերենի նախածանց *զ*-ն կարելի է հանգեցնել *հ*-*ե*. **eg*՝*հ*- նախաձևին, որը կանխադրվում է սլավոնական լեզուների *из*-ի համար:

³⁶ Տե՛ս **Մ. Փաֆեր**, նշվ. աշխ., հ. II, էջ 119:

³⁷ **Գ. Ջահուկյան**, ՀԼՊ, էջ 244:

Հավանաբար *eg'h ն հայերենում արտացոլվել է *pq* և արտասանվել *pq*, բայց հետագայում, ինչպես ըստ ի դեպքում է եղել, *p*-ն ընկել է, բայց *p*-ի արտասանությունը պահպանվել է, ինչպես այն պահպանվում է ստանձնեն, ստերիբրեմ բառերում:

**ԳՐԱԲԱՐԻ «ԶԳԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ»
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ ԲԱՅԵՐԸ**

Լեզուների բառային կազմի դասակարգումները կատարվում են տարբեր նպատակներով և տարբեր սկզբունքներով: Հայերենի բառապաշարի, հատկապես հ.-ե. բառաշերտի քննության ժամանակ նկատի են առնվում և՛ հայերենի՝ հ.-ե. այլ լեզուների հետ ունեցած ընդհանրությունները, և՛ այսպես կոչված էքսկյուզիվ՝ բացառիկ զուգաբանությունները: Լեզուների բառապաշարի ամենանախնական, պարզ դասակարգումը ծագումնաբանական դասակարգումն է: Հայերենի բառապաշարի այդպիսի դասակարգում է կատարել Հ. Աճառյանը իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ՝ առանձնացնելով բնիկ՝ հ.-ե. ծագման բառերը, և տարբեր լեզուներից կատարված փոխառությունները: Նա առաջին է կատարում հայերենի հ.-ե. բառաշերտի իմաստային-թեմատիկ խմբավորում՝ առանձնացնելով 22 իմաստային խումբ՝ 1. բնություն և բնական երևույթներ, 2. կրոն, 3. մարդ և մարմնի մասեր, 4. հիվանդություն և նմաններ, 5. կենդանիներ, 6. ընտանիք, 7. երկրագործություն, 8. խաշնարածություն և գյուղատնտեսություն, 9. արհեստ և արվեստ, 10. գույներ, 11. վաճառականություն, 12. շինարարություն, 13. հագուստ և զարդ, 14. ուտելիք և ըմպելիք, 15. առտնին տնտեսություն, 16. թիվ և չափ, 17. մետաղներ, 18. ճամփա, 19. ժամանակ և տեղ, 20. երկիր և պետություն, 21. սովորական կյանքի բառեր, 22. դերանուններ, շաղկապներ և նմաններ: Նա այս խմբերը բաժանում է ենթախմբերի: 21-րդ՝ սովորական կյանքի բառեր խմբում առանց իմաստային սահմանազատման ներկայացված են և՛ զգայական ընկալումներ, և՛ զգացմունք, և՛ մարդկային գործունեության տարբեր բնագավառներին վերաբերող, բազմազան հարաբերություններ նշանակող բառեր, որոնք հետագայում բաշխվեցին իմաստային տարբեր խմբերի: Աճառյանն այդ խմբե-

րում ընդգրկում է միայն հայերենի բառերը և չի բերում հ.-ե. այլ լեզուների համապատասխան արմատները¹:

Հ.-ե. լեզուների բառամթերքի իմաստային թեմատիկ դասակարգում է կատարում Կ.Գ.Բաքը իր հնդեվրոպական լեզուների հոմանիշների բառարանում, որում թեմատիկ խմբավորման են ենթարկված հնդեվրոպական լեզուների հոմանիշները՝ անկախ նրանց ծագումից: Ցավոք, այս բառարանում հայերենի նյութը շատ քիչ է ներկայացված: Բաքը այդ բառարանի կազմության համար իր օգտագործած աղբյուրների մեջ նշում է միայն Հ. Հյուբշմանի «Հայերենի քերականությունը» և Ե. Լիդենի «Հայկական ուսումնասիրությունները»²:

Հայերենի բառապաշարի իմաստային-թեմատիկ դասակարգում է կատարել Գ. Ջահուկյանը իր «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ: Ջահուկյանը, ինչպես նշում է և ինքը, «...ըստ հնարավորին ճշգրտորեն հետևել է Բաքի դասակարգմանը»³: Բացի հայերեն բնիկ բառերից (հին և միջին շրջանների)՝ նա բերում է նաև աշխարհաբար և բարբառային բառեր: Բաքի 22 թեմատիկ խմբերին ավելացնում է նաև 23-րդը՝ ընդգրկելով դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ: Այս խումբը հիմնականում նույնանում է Աճառյանի առանձնացրած 22-րդ խմբին. կատարված են միայն որոշ հավելումներ:

Հայերենի գրաբարյան շրջանի բառերի իմաստային դասակարգում է կատարել և Լ. Հովհաննիսյանը⁴ «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն» աշխատության մեջ. այս ուսումնասիրությունը հետաքրքրական է նաև նրանով, որ նա

¹ **Հ.Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս, Պետական համալսարանի հրատարակչություն, Ե., 1940, էջ 108-112:

² **C.D.Buck**, *A Dictionary of selected Synonyms in the principal Indo-European Languages*, The University of Chicago Press, Chicago-London, 1949, p. 4.

³ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 205:

⁴ **Լ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., I մաս, 2008, II մաս, 2012:

թեմատիկ խմբերի մեջ ընդգրկում է ոչ միայն բնիկ և արմատական բառերը, այլև գրաբարալեզու գրականության մեջ վկայված փոխառյալ, բաղադրական կազմություն ունեցող բառերը բերելով դրանց վկայությունները, գործածության հաճախականությունը, հանգամանք, որ շատ արժեքավոր է դարձնում այս ուսումնասիրությունը:

Մեր նպատակն է քննության առնել «Զգայական ընկալումներ» իմաստային խմբի բայերը փորձելով պարզել այդ բայերի՝ հ.-ե.տարբեր լեզուներում կրած իմաստային փոփոխությունների մանություններն ու դրանց նախադրյալները:

Այժմ անդրադառնանք Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի առանձնացրած «Զգայական ընկալումներ» իմաստային խմբի բառերին: Դրանում ընդգրկված են և՛ գոյականներ, և՛ ածականներ, և՛ բայեր: Բաքն այս խմբում առանձնացրել է 53 ենթախումբ: Բանն այն է, որ Բաքի ելակետը եղել է անզլերենը. դրա համար էլ նույն արմատը ներկայացվում է և՛ իբրև գոյական, և՛ իբրև ածական, և՛ իբրև բայ՝ անցողական և անանցողական նշումներով: Բայական արմատներ են to smell, to taste, hear, listen, to see, to look/at/, to show, to shine, to touch: Ջահուկյանի առանձնացրած այս խմբում բերվում են հուտի, համի, լսելիքի, տեսանելիքի, շոշափելիքի և մաշկազգացողության հետ կապված բառերը. նա նշում է, որ դրանք հիմնականում հ.-ե. ծագման արմատներ են. Ջահուկյանը բերում է նաև այդ բայերի հոմանիշները և բարբառային ձևերը:

Առաջին բայը **զգալ**-ն է: Անզլերենում sens բայն ունի 1. *զգալ, իմանալ* 2. *գիտակցել, հասկանալ* իմաստները: Բաքը sens (**զգալ**) բառահոդվածում բերված բայերի արտահայտած իմաստների մասին գրում է, որ դրանք չեն սահմանափակվում միայն զգայական ընկալմամբ. դրանք կարող են նշանակել և՛ զգայական ընկալում, և՛ մտավոր ընկալում:

Շ. Աճառյանը արմատական բառարանում բերում է **զգալ** բայի հետևյալ իմաստները՝ *իմանալ, հասկանալ, խելքը գլուխը գալ*, նաև

լուր առնել, տեղեկանալ⁵: Գ. Ջահուկյանի ստուգաբանական բառարանում **գգալ** բայի համար նշվում են *ընկալել, իմանալ, հասկանալ, ուշքի գալ, զգաստանալ, տեղեկանալ, լուր ստանալ* իմաստները⁶:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում **գգամ** բայի համար նշվում են *ճանաչել, իրազեկ լինել, իմանալ, ըմբռնել, հասկանալ* իմաստները⁷:

Հ. Աճառյանը որոշ կասկածով (**գ**)գալ արմատը կապում է հ.-ե. *wa- նախաձևի հետ: Ջահուկյանը կանխադրում է հ.-ե. *uadhmi ձևը և ստուգապես համարում է հնդեվրոպական ծագման:

Բաքը բերում է հ.-ե. լեզուների հոմանիշ արմատները, որոնք հանգում են տարբեր նախաձևերի. հունարենի համար նշում է *αἰσθάνομαι* (ապառնի *αἰσθήσομαι*, առ. *ἡσθόμην*, վղկ. *ἡσθημαι*), որն ունի *զգալ, ընկալել, նկատել* իմաստները, լատիներենի համար՝ *sentire զգալ, իմանալ, տեղեկանալ, մտածել, ենթադրել, համարել*: Հայերենում ճիշտ նույնպիսի իմաստներ են առկա, ինչպիսիք կան հ.-ե. այլ լեզուներում: Յ. Պոկորնու բառարանում այս արմատների համար բերվում են համապատասխանաբար հ.-ե. *au-, *auei- և *sent- նախաձևերը: Հին վերին գերմաներենում այս վերջին *sent- նախաձևից են *sind ճանապարհ, sinnan ճանապարհորդել*⁸:

Հ. Աճառյանը **գալ /գ-գալ** բայարմատից ծագած բառերի մեջ նշում է **գալ-ուստ**, նաև «**գայիլ** բայաձևը, որ թէև առանձին գործածական չէ, բայց գտնվում է շատ բառերի ծայրը, ինչ. շրջագայիլ, յառաջագայիլ, բացագայիլ, պարագայիլ ևն»⁹ (հմմտ. գերմաներենի վերը նշված ձևերի հետ):

⁵ Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, ԵՊՀ հրատ., հ. 2, Ե., 1973, էջ 86-87 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁶ Գ.Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*,

⁷ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1987, հ. 1, էջ 724 (այսուհետև՝ ՆԲՀ):

⁸ J. Pokorny, *Indogermanisches Etymologisches Wörterbuch*, I band, Franke Verlag Bern and München, 1959, p. 908. այստեղ հարկ ենք համարում նշել, որ այս նույն արմատից է հայ. *ընթանալ* բայը, որը, սակայն, հայերենում չունի *շրջել, ճամփորդել* նշանակությունը:

⁹ ՀԱԲ, հ.1, էջ 500:

Այսպիսով, հնդեվրոպական լեզուների *qqaw* իմաստով բառերը, անկախ նրանց ծագումից, երևան են հանում իմաստային ընդհանրություններ և իմաստային համանման փոփոխություններ:

Մյուս բայը, որին կանդրադառնանք ստորև, **հոտել, հոտոտել**-ն է: Անգլերենում *smell* –ը և՛ հոտն է, և՛ հոտ քաշելն ու հոտ առնելը: Բաքը գրում է, որ *smell*-ը գործածվում է՝ առանց տարբերակելու լավ և վատ հոտը. լավ հոտ *smell good*, վատ հոտ *smell bad*, լավ հոտ արձակել *smelling good*, վատ հոտ արձակել *smelling bad*, *to smell*-ը՝ և՛ լավ, և՛ վատ հոտ արձակելը: Անգլերենում *բուրել* իմաստը արտահայտվում է կամ այլ արմատով՝ *fragrant*, կամ հարադրությամբ՝ *smell sweet*: Բաքը նշում է, որ հ.-ե. լեզուների մեծ մասում *լավ հոտ, բույր* նշանակությամբ բառերի համար գործածվում է *smell* բառը *well, sweet* բառերի հետ: Կան լեզուներ, որոնցում լավ և վատ հոտի համար գործածվում են տարբեր բառեր. հայերենում, օրինակ, կան **հոտ** և **բույր** բառերը. **հոտ**-ը կարծեք ավելի չեզոք գործածություն ունի: Հունարենում **ὄσθω**, դոր. էլլ. **ὄζω** հոտ արձակել (**ὄζειν**. *ἔδoκει τοῦ ἄρτου κάκιστον* (Լիսիոս): Նրան թվում էր, որ հացից վատ հոտ է գալիս): Հունարենում **εὖ** մասնիկը, բառերից առաջ դրվելով, բառերին տալիս է *լավ* իմաստը. **εὖ-ὀδία**, **εὖὀδίν** նշանակում է *բույր, բուրավետ*:

Նմանատիպ երևույթ է առկա և սանսկրիտում. *gandha* նշանակում է *վատ հոտ*, իսկ *լավ հոտ* նշանակությամբ գործածվում է *su-gandhi* ձևը¹⁰/*su*-ի համար Կոչերգինայի բառարանում նշվում է, որ բառերին հաղորդում է *լավ, հիանալի* իմաստները¹¹:

Լատիներենում նույնպես *odor, odoris* բառի համար որպես առաջին իմաստ նշվում է 1. *Հոտ* (չեզոք նշանակությամբ), 2. *վատ հոտ, գարշահոտություն*, հետո միայն՝ իբրև երրորդ իմաստ՝ *բույր*: *Հոտ քաշել* իմաստն արտահայտվում է *odoror, odorari* բայով: Եվ պատահական չէ, որ լատիներենում կա *fragro, fragrare* բայը *բուրել*

¹⁰ **Кочергина В.А.**, *Санскритско-русский словарь*, М., Изд-во Русский язык, 1978, стр. 734.

¹¹ Նույն տեղում, էջ 732:

իմաստով: Ֆրանսերենում *odeur* բառը նշանակում է 1. *հոտ*, *բույր*, 2. *վատ հոտ*. հավանաբար այս երկրորդ *վատ հոտ* իմաստը ավելի գործածական է եղել, եթե նկատի ունենանք, որ *լավ հոտ ունենալ* իմաստի համար գործածական է *avoir une bonne odeur*, իսկ *déodorant*, *déodeure* կազմությունները նշանակում են *վատ հոտը վերացնող, վերացնել վատ հոտը*¹²: Բայրը՝ **հոտել**-ը, վատ հոտ արձակելը կամ վատ հոտ ունենալն է: Հ. Աճառյանը **հոտիլ**-ը բացատրում է *նեխել* և *նեխումից զարշ հոտ արձակել* և ավելացնում է, որ «հոտիլ թե գրաբարում և թե ժողովրդական զանազան բարբառներում հատուկ է միայն վատ հոտին. Պօլսի բարբառում **հոտիլ**-ը գործածվում է թե՛ *լավ* և թե՛ *վատ հոտի համար*» և բերում է օրինակ՝ «Գեշ կհոտի, և Վարդը անուշ կհոտի»¹³: Այստեղ, կարծում ենք, **հոտել**-ի *լավ* կամ *վատ* լինելը պայմանավորված է **զեշ** և **անուշ** բառերի առկայությամբ: ՆՀԲ-ում **հոտեմ**, **հոտիմ** բացատրվում են *հոտեցուցանել, նեխեցուցանել, փտեցուցանել և ժանտահոտիլ, բուրել հոտ չար*¹⁴: *Հոտ քաշել, հոտ առնել* իմաստի համար հայերենն ունի կրկնավոր կազմությամբ **հոտոտամ**, **հոտոտեմ**, **հոտոտիմ** (Առնուլ զհոտ, ձգել զհոտ ոնգամբբ) բայերը¹⁵: Հունարենում նույնպես **հոտոտել** բայը կազմվում է կրկնությամբ՝ *ὀδῶδειν*: Անգլերենում **հոտել** բայի համար գործածվում է *to rot, become rotten*: Հին սլավոներենում *вонь* (*вонѣ*) բառը ունեցել է *запах* *հոտ* իմաստը. ուկր. *воня* «հոտ», հին ռուս. *воня* 1. «բուրմունք», 2. «հոտ», հին սլավ. *вонѣ* բույր, բուլղ. *вонѣ* «*вонь* վատ հոտ», սերբախորվաթ. *вѣн*, *вѣна* «հոտ», սլովեն. *vónja*, չեխ. *vůně* «բուրմունք, аромат, հոտ», սլովակ. *vôň*, լեհ. *wóń*, վերին լուծիերեն *wón*. նախապես նշանակել է «հոտ», հմմտ. *վատ հոտ* (*зловоние* և *благовоние*¹⁶):

Հետաքրքրական է նաև **հոտ** բառի մի ուրիշ կիրառություն. Հ. Աճառյանը **հոտ** բառահոդվածում բառի բացատրության մեջ

¹² Ганшина, К.А., Французско-русский словарь, М., 1962, стр. 553.

¹³ ՆԱԲ, հ. 3, էջ 118:

¹⁴ ՆՀԲ, հ. 2, էջ 125:

¹⁵ ՆՀԲ, հ. 2, էջ 135:

¹⁶ М. Фасмер, Этимологический словарь русского языка, I том, стр.

գրում է. «լայնաբար կամ փոխաբերաբար՝ դոյզն նշմարանք, հետք»¹⁷, ՆՀԲ-ում էլ նշվում է *նշանակ, նշմարանք*¹⁸: Իմաստային նույնպիսի զարգացումներ են առկա նաև հ.-ե. այլ լեզուներում. իռլանդերենում կա *bolad*, նոր իռլ. *boladh*, որոնք ունեն *հոտ* իմաստը, իսկ *ta boladh uaidh* նշանակում է ինչ-որ մի բանի հոտ նշմարել նկատել: Հին անգլերեն *stincan*, նոր անգլերեն *stink* ունեն *վատ հոտ* իմաստը, իսկ գոթերենի *stigqan* նշանակում է (*hit, collide with*) *նշան, պատահար*¹⁹:

Իմաստային այս խմբում Գ. Ջահուկյանը **հոտել, հոտոտել** բայերից բացի նշում է նաև **մզլել** (*բորբոսնել, նեխել*) բայը, նաև **թառչկանալ** (**թռչկանալ, թռչկանալ**) *հալչել, լուծվել, քայքայվել* բայը, որին նա վերագրում է հնդեվրոպական ծագում՝ կապելով հ.-ե. **teu-skh`ta*, *tau-/*teu* նախաձևի հետ²⁰: Հ. Աճառյանն արմատական բառարանում **թռչկանալ** բայի ծագման մասին որևէ կարծիք չի հայտնում, բերում է միայն Պետերսոնի կարծիքը, որն այդ բառը կապում է սնսկր. *toṣ* արմատի հետ²¹:

Այս խմբի հաջորդ բայը *to see տեսնել*-ն է: Հետաքրքիր է, որ **տեսնել** իմաստի համար հ.-ե. լեզուների արմատները հանգում են տարբեր նախաձևերի: Հայ. *տեսանել*-ի համար կանխադրվում է **de/r/k'*- արմատը, որը զուգահեռներ ունի սանսկրիտում՝ *derc*, հուն. *δέρομαι տեսնել, նկատել*, հիռլ. *derc աչք, drech երես, կիմր. drem դեմք*²²: Հ.-ե. որոշ լեզուներում **տեսնել** բայը հանգում է **ok* «*աչք*» արմատին. այս արմատից է հայ. **ականեմ** (**զ-ականեմ**). զուգահեռներ կան հին հնդկ. *aksi*, հուն. *ὄσσε*, լատ. *oculus*, լիտ. *akis*, թոխ. *Ա ak, Բ ek*՝ բոլորն էլ *աչք* իմաստով: **Տեսնել** իմաստի համար Յ. Պոկոռնու բառարանում բերվում է **u(e)id-*նախաձևը՝ *տեսնել, իմանալ* իմաստներով. հ.-ե. լեզուներում առկա են հետևյալ արմատները՝ հին հնդկ. *vetti, vidmāsi vidānti* գիտենալ, ավ. *vaēda*

¹⁷ ՀԱԲ, հ. 3, էջ 118:

¹⁸ ՆՀԲ, հ. 2, էջ 123:

¹⁹ **Բաք**, նշվ. աշխ., էջ 1023:

²⁰ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 261 (այսուհետև՝ ՀՄԲ):

²¹ ՀԱԲ, հ. 2, էջ 218:

²² ՀԱԲ, հ. 4, էջ 396-397:

vīdarā, գիտենալ, հուն. ἴδμεναι `գիտենալ, հայ. եգիտ, հինդկ. *ávidat*, հուն. ἔφιδε *գտանել*:

Հ.-ե. **u(e)id-* նախաձևի այլ ձայնդարձով ձևից է սլավոնական լեզուների *ведать* *գիտենալ* բայը. նույն արմատից է *ведѣх* - *կախարդ*, հին ռուս. *вѣдунъ, вѣдъ* *գիտելիք, հմայություն*: Հայերենում ևս, *գիտակ, գիտուն* իմաստից բացի, այդ արմատն ունի նաև *կախարդ, հմայող, քաղղեայ* նշանակությունը՝ այս դեպքում իմաստային համապատասխանություն դրսևորելով սլավոնական լեզուների հետ²³: Հայերենում **u(e)id-* արմատի *տեսնել* իմաստը պահպանված չէ: **Տեսանել** բայի հոմանիշների մեջ Ջահուկյանը նշում է նաև բարբառային **հիսնիլ** (հեսանել ձևից), ինչպես նաև **ցուցանել** (ցոյց-ից): Հայերենի **ցոյց**-ը ծագում է հ.-ե. **skeu-sk'* ձևից²⁴: Հնդեվրոպական այլ լեզուներում *ցույց տալ* իմաստով արմատները ծագում են հ.-ե. այլ նախաձևերից: Լատիներենում կա *monstrare*, իտալ. *mostrare*, ֆր. *montrer*, որից *monstrum*, որ նշանակում է *հրեշ, ճիվաղ, այլանդակ*: Նույնպիսի իմաստ ունի հայերեն **ցուցանել** բայից կազմված **ցուցք** բառը, որը Ս. Մալխասյանցի բառարանում բացատրվում է *հրեշ, տգեղ, այլանդակ*²⁵: **Ցոյց, ցուցանել** բառի ցուցում՝ *ուղի ցույց տալ, մեկին խորհուրդ տալ* իմաստն է առկա շվեդերենում՝ *visa*, հին անգլերենում կա *wision* ձևը՝ *ուղի ցույց տալ, ղեկավարել* իմաստով²⁶:

Կ. Բաքի բերած հաջորդ բայը *taste*-ն է, որն ունի և՛ համ, և՛ համտեսել իմաստները: Հայերենի **համ** բառը Հ. Աճառյանը համարում է անստույգ ծագման. բերում է Լիդենի կարծիքը, ըստ որի՝ այն բնիկ հայերեն է, և կապում է լատ. *sapere ճաշակել, sapor համ*²⁷: Գ. Ջահուկյանը, բերելով Լիդենի կարծիքը, գրում է, որ ինքը ճշտում է կատարում՝ «...կապելով **sap-*ի **sab-* տարբերակի հետ»²⁸: Յ. Պոկոռնու բառարանում *sap-*, *sab-* արմատից են *av. višāpa* (**viš-*

²³ Տե՛ս Հ. Աճառյան, *ՀԱԲ*, հ. 1, էջ 551:

²⁴ Տե՛ս Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, էջ 132:

²⁵ Ս. Մալխասյանց, *Հայերեն բացատրական բառարան*, 1945, հ. 4, էջ 472:

²⁶ Բաք, *նշվ. աշխ.*, էջ 1043:

²⁷ Հ. Աճառյան, *ՀԱԲ*, հ. 3, էջ 16:

²⁸ Գ. Ջահուկյան, *ՀԼՊ*, էջ 189:

sāpa)`dessen Säfte Gift sind'; arm. համ (**sāpmo-*), լատ. *sapiō, -ere* (*փորձել*) *համը, համ ունենալ, sapor* համ, համեղ ուտելիք, հին իսլ. *sefi qqայություն*²⁹:

Հայերենում **համ** բառի բայական իմաստի արտահայտության համար գործածվում են հարադրական կազմություններ՝ համ առնել, համ տալ: Համանման երևույթ է նկատվում նաև հ.-ե. մյուս լեզուներում:

Բաքը գրում է, որ հ.-ե. մի քանի լեզուներում չկան բայեր *to taste* (համտեսել) իմաստի համար. այդ իմաստն արտահայտվում է համ բառի հետ զգալ, նկատել կամ նման բայեր գործածելով. օր. հունարենում *γεῦσις, εως* նշանակում է *համը փորձել*, դ՛ տիջ *γεύσεως համ, δοκιμάζω ստուգել, փորձել*³⁰: Լատիներենում *sapor, oris* նշանակում է *համ*, իսկ *saporatus՝ համեղ պատրաստված*³¹: Ֆրանսերենում *saveur* նշանակում է *համ*, իսկ *savourer՝ համտեսել, վաշելել, ճաշակել*: Եկեղեցապլավներենում կա *вѣкусь համ, ճաշակ բառը*, նաև գերմաներենից փոխառված *смак բառը*: Ժամանակից ռուսերենի *кушать* ուտել բայը ունեցել է այլ իմաստ: Ֆասմերի բառարանում բերվում են ռուս. *кушать*, ուկր. *кѹшати*, հին սլավ. *въкоушати*, սերբախորվաթ. *кѹшати փորձել*, սլովեն. *kúšati*, չեխ. *z-koušeti փորձել*³², ռուսերեն *-кусить*, բուլղ. *кѹся փորձում եմ*, սլովեն. *iskúšiti փորձել, փորձության ենթարկել*, չեխ. *kusiti փորձել, համտեսել*³³ իմաստներով: Գ. Չահուկյանը **համ** բառին վերաբերող բաժնում **համ առնում, համ ունիմ** բայերից բացի նշում է նաև իրանական **ճաշակ, ճաշակել** բառերը:

Այս խմբի բառերի քննությունը ցույց է տալիս, որ լեզուներում նույն հասկացույթը տարբեր լեզուներում, անկախ ծագունաբանական գործոնից, կարող է իմաստային նման փոփոխությունների ենթարկվել:

²⁹ Յ. Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 880:

³⁰ **И.Х.Дворецкий**, Древнегреческо-русский словарь, М., 1958, стр. 320.

³¹ **И.Х.Дворецкий**, Латинско-русский словарь, М., 1976, стр. 899.

³² **М. Фасмер**, Этимологический словарь русского языка, II т., стр. 439.

³³ Նույն տեղում, էջ 431:

ԳՐԱԲԱՐԻ «ՄԻՏՔ, ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ» ԻՄԱՍՏՍՅԻՆ
ԽՄԲԻ ԲԱՅԵՐԸ

Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ «Միտք, մտածողություն» իմաստային խմբում, հետևելով Կ. Բաքի դասակարգմանը, ընդգրկում է 29 բառիմաստային ենթախումբ, որոնցից միայն 12-ն են բայեր կամ բայարմատներ: Այստեղ կանդրադառնանք հատկապես այն բայերին, որոնք իմաստային և կամ կառուցվածքային տարբերություններ են դրսևորում հայերենում և հնդեվրոպական այլ լեզուներում: Ե՛վ Կ. Բաքի, և՛ Գ. Ջահուկյանի առանձնացրած խմբում առաջինը *Mind (միտք)* բառն է: Անգլերենի բացատրական բառարաններում *Mind* գոյականի համար բերվում են *խելք, քանականություն* իմաստները: Անգլերենի ստուգաբանական բառարանում բերվում են *Mind* գոյականի՝ հին անգլերենի *gemynd հիշողություն, հուշ, վերհուշ*, նախագերմանական **ga-mundiz*, որից՝ գոթ. *muns միտք, մտածողություն*, *munan մտածել*, հին հյուս. *minni միտք*, որոնց համար կանխադրվում է *հ.-ե.*men- մտածել, հիշել* նախաձևը. բերվում են սկր. *matih միտք, munih իմաստուն*, հուն. *μένοναկարողել, μαντις կանխագուշակել, μδομα ցանկանալ, δαυοել, մտադրվել*, լատ. *mens միտք, հասկացողություն*, *memini հիշել, mentio հիշողություն*, լիտվ. *mintis միտք, իդեա*, հին եկեղեցապավ. *mineti մտածել կարծել*, բանջատ *հիշողություն*: Բայը՝ *to mind*, ունի *հիշել, մտապահել* իմաստները³⁴:

Յ.Պոկորնու բառարանում հայերենի **իմանամ** բայը նշվում է *հ.-ե.*men-* նախաձևին հանգող արմատների մեջ³⁵: Հ. Աճառյանը **իմանամ** բայի ծագման մասին խոսելիս բերում է Պ. Լագարդի, Ս. Տերվիշյանի, Ա. Մեյեի կարծիքները՝ ոչ մեկն էլ ստույգ ու վերջնական չհամարելով: Մեյեն համեմատում է հայ. **իմանամ**-ը հրգ. *manom*, ինչպես նաև լիտվ. *i-manaũ* ձևերի հետ: Աճառյանը նշում է

³⁴ www.etymoline.com

³⁵ **J.Pokorny**, Indogermanisches Etymologisches Wörterbuch, I band, Franke Verlag Bern and München, 1959, p.727.

նան Հ.Պոկոռնու կարծիքը. վերջինս հայերեն **իմանամ** բայը լատ. *emō, erē* ձևերի հետ ծագած է համարում հնիս. *em- արմատից՝ հղելով Յ. Պոկոռնու բառարանին, սակայն այդ բառարանում *em- նախաձևին հանգող ձևերի մեջ չի նշվում հայերեն **իմանամ** բայը³⁶: Գ. Ջահուկյանը և՛ «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ, և՛ «Հայերեն ստուգաբանական բառարանում» նույնպես **իմանամ** բայը համարում է բնիկ հնդեվրոպական և գրում է, որ «հավանաբար *h.-ե. *em- վերցնել* արմատից»։ նա բերում է այդ արմատի զուգահեռները հնդեվրոպական այլ լեզուներում՝ լատ. *emō*, հին իռլ. *em վերցնել, ընդունել*, լիտվ. *imti վերցնել*, հին սլ. *imѣti վերցնել, ունենալ*, և կանխադրում է իմաստային հետևյալ անցումները՝ *վերցնել, բռնել, ըմբռնել*: Նա, ինչպես և Աճառյանը, նշում է նաև Մեյեի կարծիքը՝ *men- *մտածել* ձևից ծագած լինելու մասին, և առարկում է՝ անբացատրելի համարելով բառակցի *ի-ի* առկայությունը³⁷: Նշված լեզուներից ոչ մեկում, որոնցում կան այդ արմատները, Ջահուկյանի նշած *վերցնել-բռնել* իմաստներն առկա են, *ըմբռնել-իմանալ* իմաստային անցումներ վկայված չեն (հմմտ. լատիներենի, սլավոնական լեզուների համապատասխան արմատների իմաստները. լատիներենում *emō* արմատն ունի *գնել, ձեռք բերել* իմաստները³⁸, սլավոնական լեզուներում *иметь, имѣти, имамь* արմատները նույնպես ունեն *վերցնել, ունենալ* իմաստները)³⁹:

Կարծում ենք, որ **իմանալ** բայի ծագման վերաբերյալ ավելի հավանական է Ա. Մեյեի և Յ. Պոկոռնու (հավանաբար հետևելով Մեյեին) կարծիքները. նրանք այն հանգեցնում են *h.-ե. *men-* նախաձևին: Յ. Պոկոռնու բառարանում բերվում են *men- նախաձևից

³⁶ **Հ.Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, ԵՊՀ հրատ., հ. 2, Ե., 1973, էջ 241 (այսուհետև՝ ՀՄԲ):

³⁷ **Գ.Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասողիկ» հրատ., Ե., 2010, էջ 285 (այսուհետև՝ ՀՄԲ):

³⁸ **И.Х.Дворецкий**, Латинско-русский словарь, М., Изд-во «Русский язык», 1976, с. 368.

³⁹ **М.Фасмер**, Этимологический словарь русского языка, М., Изд-во «Прогресс», т. 2, 1986, с. 129.

ծագած և իմաստային մերձավորություն ունեցող արմատներ հ.-ե. գրեթե բոլոր լեզուներից. դա պետք է համարել բնական, քանի որ այնպիսի հասկացույթներ, ինչպիսիք *իմանալը* և *գիտենալն* են, չէին կարող գոյություն չունենալ լեզուներում: Հ.-ե. *men- արմատից են հին հնդկ. *mánayatē մտածում է*, ավեստ. *manah բանականություն, միտք*, հուն. *μαομαι ցանկանալ, ձգտել, մտադրվել*, լատ. *memini հիշել, մտաբերել*, հին իռլ. *do-moiniur մտածել, հավատալ*, գոթ. *man, *munum մտածել, համարել*, լիտվ. *menù մտածել*, հին եկվալ. *mənjo, mənēti մտածել*, նույն արմատից՝ *po-mənēti հիշել, մտաբերել*, թոխ. *U mnu մտածել, թոխ. F mañu ցանկանալ, պահանջել*: Պոկոռնին հայերենի *i-manam*-ի համար կանխադրում է *menā-mi ձևը, իսկ լիտվ. *iš-monis*-ը համարում է արմատի լիաձայն, ձայնդարձի բարձր աստիճանով կազմված արմատ:⁴⁰

Հայերենի **իմանալ** բայի իմաստների մեջ և՛ Նոր հայկազեան բառարանում, և՛ Աճառյանի արմատական բառարանում, և՛ Ջահուկյանի ստուգաբանական բառարանում բերվում են *հասկանալ, մտքով ըմբռնել, խորհրդածել, մտածել, համարել, ենթադրել, զգալ* իմաստները, որոնք համահունչ են հնդեվրոպական մյուս լեզուներում պահպանված իմաստներին: **Իմանալ** բայի բառասկզբի *ի*-ի առկայությունը, որը հիմք է տալիս Ջահուկյանին չընդունելու Ա. Մեյերի կարծիքը, կարելի է բացատրել հայերենին հատուկ օրինաչափությամբ. հիշենք հայերենի **ինն** բառի բառասկզբի *ի*-ն, որը զուգահեռ ունի միայն հունարենում, իսկ հ.-ե. մյուս լեզուներում այն չկա: Ֆ. Վինդիշմանը հայերենի **ինն** բառի *ի*-ն և հունարենի **έννέα** բառի **έ**-ն համարում է հավելված⁴¹: Եթե այս բառում կարող էր հավելված լինել, ինչու չի կարելի ենթադրել, որ այս դեպքում ևս *ի*-ն հավելվածային ձայնավոր է:

Հաջորդ բառը և՛ Բաքի, և՛ Ջահուկյանի բառացանկում **think/մտածել**-ն է, որի համար Բաքը նշում է երկու իմաստ. մեկը՝ *խոր-*

⁴⁰ Յ. Պոկոռնի, նշվ. աշխ., էջ 726-728:

⁴¹ ՀԱԲ, հ. 2, էջ 244:

հել, խորհրդածել (17.13), մյուսը՝ կարծել, ենթադրել (17.14)⁴²: Think անգլերենում միայն բայական իմաստ ունի, իսկ միտք գոյականական իմաստի համար գործածվում է thought բառը: Գ. Ջահուկյանը 17.13 խմբում դնում է **զմտաւ ւածել** բայը, իսկ 17.14-ում՝ **ունիմ ւտ՝ համարել**: **Չմտաւ ւածել**-ը, բացի խորհել, խոկալ, իմանալ իմաստներից, ունի նաև կարծել, համարել նշանակությունները: Հայերենում մտածել նշանակությամբ բայերը հիմնականում հարադրություններ են, իսկ միտ բառով կազմված են հարադրություններ՝ միտ առնել, միտ դնել, միտս դնել, ի մտի դնել, ի միտ առնուլ, ի միտս գալ, զմտաւ ւածել, ընդ միտ մտանել, ի մտաց անկանել և այլն, որոնք արտահայտում են իմաստային տարբեր նրբերանգներ⁴³: Հետաքրքիր է, որ անգլերենում ևս think բառը, տարբեր նախդիրներով գործածվելով, արտահայտում է այնպիսի իմաստներ, որ շատ մոտ են հայերեն հարադրությունների նշանակություններին. օրինակ՝ **to call/bring something to mind** – հայ. *մտաբերել*, **to make up one's mind (about something)** – հայ. *ի մտի դնել հաստատել, չճշել*: Այսինքն՝ հ.-ե. լեզուներում այս արմատը իմաստային նմանատիպ զարգացումներ է ունեցել:

Մյուս բայը, որին ուզում ենք անդրադառնալ, understand/ **հասկանալ** բայն է: Գ. Ջահուկյանը այս ենթախմբում, բացի **հասկանալ, ըմբռնել, իմանալ** բայերից, նշում է նաև **մանել** բայը, որը ինքն է ստուգաբանել կապելով հ.-ե. *men- արմատին, չնայած ավելացնում է նաև «եթե այն **մանել** բայի փոխարերական գործածությունը չէ»⁴⁴: Աճառյանը **մանել** բայի **մանի** ձևն է միայն նշում՝ գրելով «խօսող» և ավելացնում է, որ կա միայն Երեմիա Մեղրեցու բառարանում⁴⁵: **Մանել** բայը Ս.Մալխասեանցը բացատրում է *հաս-*

⁴² C.D.Buck, *A Dictionary of selected Synonyms in the principal Indo-European Languages*, The University of Chicago Press, Chicago-London, 1949, p. 12002-12006.

⁴³ Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1987, հ. 2, էջ 281-282 (այսուհետև՝ ՆԲՂ):

⁴⁴ Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն*: Նախագրային ժամանաշրջան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Ե., 1987, էջ 278 (այսուհետև՝ ՀԼՊ):

⁴⁵ ՀԱԲ, հ.3, էջ 253:

կանաչ և համարում է ծածկալեզվում գործածվող բառ⁴⁶: Մանել բայը իբրև **հասկանալ** բայի հոմանիշ բերված է նաև Ա.Սուքիասյանի հոմանիշների բառարանում⁴⁷: Եթե ճիշտ է Գ. Ջահուկյանի՝ **մանել** բայի հ.-ե. *men- նախաձևին հանգելու ենթադրությունը, կարելի է եզրակացնել, որ *men- արմատը հայերենում արտացոլվել է ն **մանել**, և **իմանալ** տարբերակներով:

Հետաքրքիր է հայերեն **մոռանալ** բայի՝ հնդեվրոպական լեզուներում եղած համապատասխանությունները: Կ. Բաքի բառարանում 17.32 համարը forget բայն է: Հ. Աճառյանը **մոռանալ** բային նվիրված բառահոդվածում գրում է, որ ստուգաբանել են Ս. Տերվիշյանը և Ս. Բուզգեն միմյանցից անկախ՝ համարելով բնիկ հնդեվրոպական արմատ՝ հ.-ե.*mer-, *mer-s- նախաձից⁴⁸: Յ.Պոկոռնու բառարանում բերվում են այդ արմատի՝ հնդեվրոպական մյուս լեզուների՝ հին հնդկերենի, գոթերենի, հին վերին գերմաներենի, հին ֆրիզերենի, լիտվերենի համապատասխանությունները: Չկան անգլերենի՝ այդ արմատից կազմված բառեր⁴⁹: Forget-ը անգլերենի ստուգաբանական բառարանում բացատրվում է *մոքում որևէ բան վերականգնել ձախողելը, մտաբերելու ուժ չունենալ, չկարողանալ հիշել*. բայի ծագման մասին նույն բառարանում ասվում է, որ այն կազմված է for- *հեռու, հակառակ* և *gietan< get *բռնել* արմատներից. վերջինի համար վերականգնում են *ghend, *ghod- նախաձևերը (*վերցնել, բռնել* իմաստներով), որից կազմվում է un-get, և ունի *հիշողությունից՝ մտքից կորցնել՝ հանել* իմաստը: Բերվում են հին սաքսոներեն fargetan, դանիերեն vergeten, գերմաներեն vergessen՝ բոլորն էլ *մոռանալ* իմաստով⁵⁰:

Հնդեվրոպական այլ լեզուներում *մոռանալ* իմաստն արտահայտվում է այլ արմատներից կազմված բառերով. օրնակ՝ Յ.Պոկոռնու բառարանում բերվում է *lā-նախաձից հունարենի

⁴⁶ Ս. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, 1945, հ. 3, էջ 251:

⁴⁷ Ա.Սուքիասյան, *Հայոց լեզվի հոմանիշների բառարան*, Ե., 1967, էջ 370:

⁴⁸ ՀԱԲ, հ.3, էջ 346:

⁴⁹ Յ.Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 737-738:

⁵⁰ www.etymoline.com

λήθω, դր. *λάθω* ձևերը՝ *գաղտնի լինել, մոռանալ* իմաստով: Նույն արմատից է լատիներենի *lateō, ēre թաքնվել, պահվել* իմաստով⁵¹: Իսկ հ.-ե. *mer-s-*mor-s- արմատի *(s)mer – *հիշել* արմատից են հին հնդկ. *smāraṭi հիշել*, լատ. *memoria հիշողություն, memor հիշող, լավ հիշողություն ունեցող*: Պոկոռնին այս նախաձևի տակ նշում է նաև հայ. **մորմոք** բառը կրկնությամբ կազմված, և բերում է նաև հունարենի **μερμηρίζω, μέρμερος** *ծանր, դժվար, տանջալի, անտանելի* իմաստով, որոնք և՛ կազմությամբ, և՛ իմաստով մոտ են հայերենի **մորմոք** բառին⁵²: Հ. Աճառյանը բերում է այս արմատի մասին Պոկոռնու ստուգաբանությունը, բայց ինքը որևէ կարծիք չի հայտնում⁵³: Գ. Ջահուկյանը **մորմոք** բառի ծագման վերաբերյալ հղում է Պոկոռնուն՝ գրելով, որ նա այդ բառը հանգեցնում է հ.-ե.*mer-*մտածել, հիշել հոգալ* նախաձևին, իսկ ինքը կապում է *mer- *տրորել, շփել* նախաձևին⁵⁴: Պետք է նշել, որ Ջահուկյանի նշած *mer- արմատից հ.-ե. մյուս լեզուներում վկայված չեն նմանատիպ իմաստով գուգահեռներ. հմմտ. հին հնդկ. *mṛṇāti -տրորել, շփել, մանրացնել*, հուն. *μαραίνω* *թուլանալ*, լատ. *Mörser հավանգ, սանդ*, *morbus հիվանդություն*, հին իսլ. *merja խփել*, սերբ. *mŕva փշոտ*, անգլասաքս. *mearo նուրբ, փխրուն*, նորվեգ. *moren, maren փտած, մզված*, իեթ. *marriattari մանրացրած, կտորների վերածած*⁵⁵: Կարծում ենք, որ **մորմոք** իմաստը ավելի հավանական է կապել 3.Պոկոռնու նշած *մտածել, հոգալ* իմաստով նախաձևին:

Գ. Ջահուկյանի ցանկում է 17.39 հայերեն **լուծանեմ (լոյծ)** բառն է, Կ. Բաքը 17.39 նշում է *solve*: Հ. Աճառյանը **լոյծ** արմատը *հալուկ, հեղկային, հալիլուկ, ջրջրկոտ, կակոտղ* իմաստներով, որից **լուծանել քանդել, արձակել**, համարում է բնիկ բառ՝ հ.-ե. *leu- կամ *lou- արմատից, «աճել է մեր մէջ –g/o մասնիկով»: Այնուհետև նշում է հունարենի *λύω՝ լուծել, արձակել հալեցնել* իմաստներով,

⁵¹ Զ.Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 651:

⁵² Զ.Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 969:

⁵³ ՀԱԲ, հ. 3, էջ 349-350:

⁵⁴ ԼՀՊ, էջ 239:

⁵⁵ Զ.Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 735-736:

սանսկ. *lunáti կտրել, հեռացնել*, *luná- կտրած*, *lavi մանգաղ*, լատ. *luō վճարել*, *re-luō լուծել*, *so-lvo լուծել, բաժանել*, *luēs լուծույթ, անմաքուր հեղուկ*⁵⁶: Գ.Ջահուկյանը **լոյծ** բառը կապում է հնդեվրոպական **leug'- կտրել, խախտել* արմատին՝ համեմատելով հին հնդկ. *rujáti կտրում է, ջարդում է*, հին անգլ. *to-lūcan քայքայել, կործանել*, լիտվ. *lauėti կտրել*⁵⁷:

Հնդեվրոպական լեզուների ստուգաբանական բառարաններում (և՛ Պոկոռնու, և՛ Ստարոստինի, և՛ Ուոսկիխսի) **leu-* արմատի համար բերվում է բաժանել (*делить*) իմաստը⁵⁸: Յ.Պոկոռնու բառարանում **leu-* նախաձևից ծագած արմատների մեջ չի նշվում հայերեն **լոյծ**-ը, բայց Հ.Աճառյանի՝ *հ.-ե.* մյուս լեզուներից բերած ձևերը իրենց իմաստներով այդ բառահոդվածում առկա են⁵⁹: Անգլերենի ստուգաբանական բառարանում *ևս solve* բառի համար բերվում է նախահնդեվրոպական **se-lu-*, որի *se-*ն **s(w)e-* անդրադարձ դերանունն է, իսկ *lu-*ն հանգում է *հ.-ե.* **leu-* *կորցնել, բաժանել, մասնատել* արմատին⁶⁰: Ո՛չ Պոկոռնին, ո՛չ Ջահուկյանը և Աճառյանը որևէ օրինակ չեն բերում սլավոնական լեզուներից: Այնինչ Մ.Ֆասմերի բառարանում ռուսերեն *лучить, лучу* բառերը ունեն *բաժանել, առանձնացնել* իմաստները. նա բերում է նաև հին սլավ. *лжчити, հուն. χωρίζεις, բուլղ. лъ'ча առանձին, անջատ*, սերբախորվաթ. *лўчити, лўчѣм առանձնացնել*, սլովեն., չեխ. *ločiti*, սլովակ. *lúčit', բաժանել, առանձնացնել* իմաստներով՝ բոլորն էլ նախասլավոններեն **ločiti*-ից⁶¹: Կարծում ենք, որ այս արմատը առկա է նաև սլավոնական լեզուներում, բայց գործածական են նախաձևնցավոր *отлучить, разлучить* ձևերը: Նախասլավոններենի *ločiti առանձնացնել, անջատել* իմաստով կա նաև սլավոնական լեզուների ստուգաբանական բառարանում, որտեղ բերվում են ոչ միայն հին սլա-

⁵⁶ ՀԱԲ, հ.2, էջ 293:

⁵⁷ ՀԱԲ, էջ 300:

⁵⁸ www.proto-indo-european.ru

⁵⁹ Յ.Պոկոռնի, *նշվ. աշխ.*, էջ 681:

⁶⁰ www.etymoline.com

⁶¹ **Մ.Փասմեր**, *Этимологический словарь русского языка*, М., Изд-во «Прогресс», т. 2, 1986, с. 536-537.

վոներենի և եկեղեցասլավոներենի, այլև սլավոնական լեզուների
բարբառների՝ այդ բառի ձևերը⁶²:

⁶² *Этимологический словарь славянских языков. праславянский лексический фонд*,
М., «Наука», 1990, Выпуск 16, с.132-133.

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ Հ.-Ե. ԾԱԳՄԱՆ ՀՈՄԱՆԻՇ ԲԱՅԵՐԸ

Հնդեվրոպական հոմանիշ արմատների ուսումնասիրության ուղղությամբ կատարված աշխատանքները ամբողջական և սպառնիչ համարել չի կարելի ինչպես հ.-ե. նախալեզվի, այնպես էլ հ.-ե. առանձին լեզուների համար:

Հնդեվրոպական լեզուների հոմանիշ արմատների վերաբերյալ միակ ընդգրկուն աշխատությունը Կ.Դ.Բաքի բառարանն է¹: Բառարանում տեղ գտած հ.-ե. լեզուների հոմանիշ արմատները խմբավորված են ըստ թեմատիկ խմբերի: Բաքն առանձնացրել է 22 թեմատիկ խումբ՝ համապատասխան ենթախմբերով: Նա օգտվել է մինչ իր այդ բառարանի կազմումը հրատարակված ստուգաբանական բառարաններից, մասնագիտական հանդեսներում զետեղված նյութերից, հնդեվրոպական առանձին լեզուների վերաբերյալ եղած ուսումնասիրություններից: Բաքի բառարանում հայերենի նյութը քիչ է ընդգրկված: Ինչպես հայտնի է դառնում հեղինակի կողմից օգտագործված գրականության ցանկից, նա հայերենի հ.-ե. արմատների մասին տեղեկությունները քաղել է Հ. Հյուբշմանի «Հայերենի քերականություն»-ից², Ե. Լիդենի հայագիտական ուսումնասիրություններից³ և այլ լեզուների ստուգաբանական բառարաններում հայերենի վերաբերյալ տեղ գտած տվյալներից: Բացի այդ՝ Բաքն իր բառարանի առաջաբանում գրում է, որ հ.-ե. մի քանի փոքր (minor) լեզուների, ինչպիսիք են այլբաներենն ու հայերենը, ինչպես նաև հնդկական և իրանական ժամանակակից լեզուների ձևերը դուրս են մնացել քննության շրջանակներից՝ բացառյալ առանձին հիշատակությունները⁴:

¹ Տե՛ս **Buck C.D.**, A Dictionary of selected Synonyms in the principal Indo-European Languages, The University of Chicago Press, Chicago Illinois, 1949:

²Տե՛ս **H.Hübschmann**, Armenische Grammatik, I-II, Leipzig, 1895–1897:

³ Տե՛ս **E.Liden**, Armenische Studien, Göteborg, 1906:

⁴ Տե՛ս C. Buck., նշվ. աշխ., էջ XI:

Հայերենի համանիշ արմատները առաջին անգամ ամբողջականորեն ամփոփվում և դասակարգվում են Գ. Ջահուկյանի կողմից⁵: Հետևելով Բաքի կատարած թեմատիկ դասակարգմանը՝ նա կատարում է հայերենի համանիշ արմատների բառափմաստային խմբավորում՝ ընդգրկելով ինչպես գրաբարյան և միջինհայերենյան բառապաշարը, այնպես էլ աշխարհաբարի և հայերենի բարբառների ընձեռած նյութը:

Բաքի կատարած դասակարգումը (22 խումբ) Գ. Ջահուկյանը լրացնում է՝ առանձնացնելով ևս մեկ թեմատիկ խումբ՝ 23-րդը. այդ խմբում նա ընդգրկում է դերանունները և սպասարկու բառերն ու մասնիկները: Նույն աշխատության մեջ Գ. Ջահուկյանն անդրադառնում է նաև հնագույն հայերենի բառային տարբերակներին, ավելի ստույգ՝ բառփմաստային տարբերակներին՝ հատկապես ուշադրություն դարձնելով տարբեր բառերով նույն կամ մերձավոր իմաստների արտահայտությանը:

Գ. Ջահուկյանը չի անդրադառնում համանիշ արմատների իմաստային-կառուցվածքային քննությանը. նա գրում է. «Տարածական (իմա՝ բարբառային-Ն.Ս.) տարբերությունների կողքին համանիշային շարքերը պիտի արտահայտեին նաև գործառական, ոճական կամ իմաստային սովորական տարբերություններ: ... Ապագային թողնելով այս բոլոր տարբերությունների հանգամանալից քննությունը՝ այստեղ բերենք դասական հայերենի հուշարձաններում առկա այն համանիշային շարքերը..., որոնք կարող էին հատուկ լինել նաև հնագույն հայերենին, մասնավորապես նրա զարգացման ուշ փուլին»⁶:

Մեր նպատակն է քննության առնել հին հայերենի (գրաբարի) հ.-ե. ծագման համանիշ բայերը՝ փորձելով պարզել նրանց իմաստագործառական տարբերություններն ու առանձնահատկությունները: Այստեղ կանդրադառնանք միայն *ածել-բերել*, *ամալ-լնում*, *ազանիս-զգենում* համանիշ բայազույգերին:

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, «Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան» Ե., 1987:

⁶ Անդ, էջ 388-389:

Հայերեն⁷ ածել բայը հանգում է հ.-ե. *agō- «քշել, վարել, տանել» նախաձևին⁸: Հնդեվրոպական մյուս լեզուներում այս արմատն արտացոլված է «տանել, քշել, վարել», իմաստներով, ինչպես հինդկ. ájati, ավ. azaiti, հուն. ἄγω, լատ. agō, թոյս. U. F āk, օսկ. acum, ումբր. aitu և այլն: Հնդեվրոպական այս արմատի -to-ով աճած դերբայական ձևերն առկա են հունարենում՝ ἄκτος, լատիներենում՝ āctor, āctus, կելտ. *amb(i)-aktos, որից գոթ. andbahts, հին վերին գերմ. am-baht, բոլորն էլ «ճառա, սպասավոր, լրաբեր, բանագնաց» նշանակություններով: Այս արմատի օ-ով հիմքից են համարվում հուն. ἄγος «առաջնորդ», στρατ-αγός, աստիկյան-իոնական στρατ-ηγός, հնարավոր է նաև ἡγεμῶν, դորիական ἄγεμῶν, «առաջնորդ» իմաստով բառերը: Հին հայերենում այն պահպանված է միայն բայական իմաստով: Հայերենում *ածել* բայի նախնական իմաստն է եղել *բերել*. այն գործածվել է նաև «փոխադրել, տանել, վարել» նշանակություններով: Բայց այս բայն ունեցել է ոչ թե որևէ բան, որևէ իր մի տեղից մյուսը տանելու, բերելու, փոխադրելու ֆիզիկական իմաստ, այլ արտահայտել է ավելի շուտ ուղեկցելու, մի տեղից մի այլ տեղ գնալու, տանելու գործողությունը ի կատար ածելուն նպաստելու, հետը գնալով առաջնորդելու իմաստները: Այդ են վկայում *ածել* բայի գործածության օրինակները գրաբարյան (Խորենացի, Եզնիկ, Եղիշե, Ագաթանգեղոս, Փարպեցի) գրավոր հուշարձաններում, ինչպես նաև *ածել* բայով կազմված հարադրությունները (հմմտ. գմտաւ ածել, ակն ածել, ի յայտ ածել, ի կերպարանս ածել, ի գոյ ածել և այլն):

Հայերենի *բերել* բայը հանգում է հնդեվրոպական *bher- նախաձևին, որի՝ հնդեվրոպական մյուս լեզուներում պահպանված գուգահեռներն ունեն «բերել, կրել» իմաստները. օրինակ՝ հինդկ. bhārati, ավ. baraiti, հայրսկ. baranty, հուն. φέρω, փոյուգ. αβ-βερει, լատ. ferō, ավր. bie, գոթ. baira- բոլորն էլ «բերել, կրել» նշանա-

⁷ Հայերեն ասելով նկատի ունենք հին հայերենը կամ գրաբարը:

⁸ Հնդեվրոպական նախաձևերը բերվում են ըստ Յու. Պոկորնու ստուգաբանական բառարանի (Ju. Pokorny, Indogermanisches etymologisches Wörterbuch, I, Bern und München, 1959):

կույթուններով: Ինչպես հնդեվրոպական լեզուների մեծ մասում, այնպես էլ հայերենում այս արմատն արտացոլված է նաև գոյականական *բար, բերք* (պտուղ, արդյունք) իմաստներով: Հեկսավ.-ում *berō* բայն արտացոլված է նաև *գումարել, հավաքել*, նաև *վերցնել* իմաստներով: Ինչպես հայտնի է դառնում *բերեմ* բայի գործածությունների քննությունից, այն կիրառության շատ ավելի լայն շրջանակ է ունեցել՝ իր մեջ ներառելով նաև *ածել* բայի իմաստները: Այն գործածվել է ն՝ որևէ իր մի տեղից մյուսը տանելու, տեղափոխելու, ն՝ մեկին մի տեղ առաջնորդելու իմաստներով: Հավանաբար այս հանգամանքով է բացատրվում *ածել* բայի «բերել» իմաստով կիրառությունների հետագա սահմանափակումը, և հետգրաբարյան բառարաններում արդեն *ածել* բայի համար *բերել* իմաստը չի նշվում: «Արդի հայերենի բացատրական» բառարանում արդեն այս իմաստները վկայված չեն: Համանման իմաստային զարգացումներ նկատվում են նաև հնդեվրոպական մյուս լեզուներում: Բաքի բառարանում ն՝ *carry* (կրել, տանել, փոխադրել), ն՝ *bear* (կրել, դիմանալ, տանել, ծնել, պտուղ տալ), ն՝ *bring* (բերել) իմաստների համար բերվող բառահոդվածներում բերվում են նույն լատ. *fero*, հուն. *φέρω* բայերը. հուն. *ἄγω* ձևի համար նշվում է, որ այն գործածվում է «գլխավորապես կենդանի արարածների համար»⁹:

Նույն երևույթը առկա է նաև գերմանական լեզուներում. Բաքը գրում է «... մի ժամանակ գերմանական լեզուների համար ընդհանուր *carry* «կրել, տանել, փոխադրել» իմաստները, որոնք արտահայտվում էին **ber-* արմատին հանգող բառերով, այժմ մասամբ սահմանափակված են (օր. դանիերեն *baren*, ն.վ.գերմ. *gefären* նշանակում են *բերել երեխաներ*, նոր անգլերենում *բերել* իմաստով *bear* բայը նշանակում է *տոկալ, դիմանալ, համբերությամբ տանել*, բայց ոչ այլևս ընդհանուր *carry* «բերել, կրել» իմաստով¹⁰: Իսկ *բերել* իմաստի համար գործածական են *bring, carry* բայերը:

Bear բայը գործածվում է նաև հարադրություններում՝ օր. *bear in mind*: Հետաքրքիր է, որ իմաստային նույն առանձնահատկույթ-

⁹ Տե՛ս **C. Buck**, նշվ. աշխ., էջ 707:

¹⁰ Անդ:

յունն առկա է նաև հայ. *զմտաւ ւածել* հարադրության մեջ, որը և՛ իմաստով, և՛ բառակազմական կադապարով համընկնում է գերմանական լեզուներում առկա զարգացումներին:

Կ. Բաքի նշած իմաստային զարգացումը *bear* բայի համար նոր անգլերենում (ծնել, պտուղ տալ) նկատելի է նաև հայ. *ւածել* բայի հետագա իմաստային զարգացումների մեջ¹¹ ած «ծիլ, ընձյուղ», ածել (ձու), ած-ու «մարգ» և այլն:

Այսպիսով, *ւծեմ* և *բերեմ* բայերը, չնայած իմաստային մերձավորությանը, ունեցել են գործառական տարբեր ոլորտներ. *բերել* բայը ավելի լայն իմաստ է արտահայտել և ավելի լայն կիրառություն է ունեցել, որի հետևանքով էլ *ւծեմ* բայի գործածության շրջանակները նեղացել են, իսկ *բերեմ* բայը ներառել է նաև *ւծեմ* բային հատուկ *բերել* նախնական իմաստային նրբերանգները: Դրանով են պայմանավորված *ւծեմ* բայի հետագա իմաստային զարգացումները (թափել, լցնել, նվազել ևլն):

Հին հայերենում *լցնել* իմաստով գործածվել են երկու բայ՝ *ամամ* և *լնում*: *Ամամ* բայի հնդեվրոպական վերականգնվող նախաձևի մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ: Վերականգնում են ինչպես *am- նախաձևը՝ «բռնել» իմաստով (Յու. Պոկոռնի), այնպես էլ *sem նախաձևը՝ «լցնել» իմաստով (Պետերսոն, Ջահուկյան):

Հ.Աճառյանը նշում է, որ ավելի հարմար է *am- նախաձևի համար ոչ թե «բռնել», այլ «լցնել» իմաստի վերականգնումը¹²: Պոկոռնու բառարանում *am- «բռնել» իմաստով նախաձևից են համարվում հինդկ. *amatram աման, կուժ*, հայ. *աման* և որոշակի վերպահությանը՝ նաև լատ. *ampla* «բռնակ»: Այնինչ Յու. Պոկոռնու բառարանում նշվում է նաև *sem- նախաձևը, որի համար կանխադրվում է «լցնել» իմաստը: Այս արմատին են հանգում հուն. ἄμυ «դույլ», ἄμυς «գիշերային աման», ἄμνιον «բաժակ՝ գոհի արյունը լցնելու համար», իտեթ. *hyan*- «լցնել», լատ. *sentina* “Kielwasser” (նավակողերի այն գիծը, որը նշում է ջրի մեջ սուզվելու չափը). այս

¹¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայրեն արմատական բառարան, հ. I, Ե., 1971, էջ 101:

¹² Տե՛ս անդ., էջ 143:

նախաձևից են նաև հին իռլ. *sem-* «լցնել», լիտվ. *samiū, sémti* «ամանով ջուր վերցնել, լցնել», *sámtis-* «ջուր վերցնելու բաժակ» և այլն: Ինչպես տեսնում ենք, հնդեվրոպական **sem-* արմատի՝ մյուս լեզուներում պահպանված բոլոր գուգահեռներն էլ ունեն հեղուկի համար նախատեսված տարողություն, հեղուկ (ջուր, արյուն) որևէ տեղից վերցնելու, լցնելու բաժակ, աման իմաստները:

**am* «բռնել» նախաձևին հանգող արմատներ ենթադրվում են միայն հայերենի, հին հնդկերենի համար, մինչդեռ **sem* «լցնել» իմաստով արմատը գուգահեռներ ունի հնդեվրոպական ավելի շատ լեզուներում: Հայերենի *ամ* բայարմատից է ծագում նաև հայ. *աման* գոյականը, որը հայերենում միակ բնիկ հնդեվրոպական ծագման բառն է «տարողություն, աման» իմաստով՝ նախապես նշանակելով միայն աման՝ հեղուկ լցնելու համար, իսկ հետագայում տեղի է ունեցել իմաստի ընդլայնում, ինչպես զինեման, խնկաման, նույնիսկ՝ ոտնաման:

Ինչո՞ւ է ավելի նպատակահարմար «լցնել» իմաստով **sem-* նախաձևի կանխադրումը: Աճառյանը նշում է, որ այդ իմաստը ավելի հարմար է, բայց չի հիմնավորում իր այդ միտքը: Փորձենք հիմնավորել:

Հնդեվրոպական տարբեր լեզուներում *աման, կաթաս, սկուտեղ, անոթ, թավա, ափսե* և նման իմաստներով բառերի (նաև Բաքի բառարանում նշված բառերը նկատի ունենալով) քննությունը ցույց է տալիս, որ դրանք սովորաբար ծագում են *եռալ, այրել, ուղղել, հարթել, թեքել, ծռել, կորացնել, շերեփով լցնել, լցնել, սփռել, խմել* իմաստներով բայերից. հմմտ. հուն. *πιτῆριον* - «սկահակ» - *πίνω* - «խմել» արմատից, լատ. *patina* «տափակ աման» (սփռել, տարածել), հուն. *λεκανη*, լատ. *lanca* - թաս, տաշտ (թեքել, ծռել, կորացնել բայերից և այլն): (Այլ լեզուներում ևս նման օրինակներ կան):

Մա ցույց է տալիս, որ տիպաբանորեն ևս *աման, աման* բառերի ծագումը «լցնել» իմաստով նախաձևին հանգեցնելը ավելի հավանական է, քանի որ «բռնել» իմաստով արմատից ծագած «աման» իմաստով գոյականներ չեն վկայվում հնդեվրոպական լեզուներում:

Հայերենում «լցնել» իմաստ ունեցող մյուս բայը *լնում*-ն է: Ի տարբերություն *ամամ*-ի՝ *լնում* բայը թե՛ հայերենում, թե՛ հնդեվրոպական մյուս լեզուներում շատ լայն տարածում ունի. այդ բայը հանգում է հնդեվրոպական *plē- նախաձևին, որը վկայված է սնսկր. prā, piparti, pṛnāti «լցնել, հագեցնել, լիացնել», pūrṇa-, pṛāṇa «լի», հայրսկ. paru-, «շատ», զենդ. par «լցնել», pəṛəna «լի», հուն. πλήροε «լի», πλήρωω «լցնել, լրացնել», հիբլ. linaim «լնում», գերմ. füllen «լցնել», լիթվ. pilnas «լի», հալ. plnũ, ռուս. полно, полный «լի» և այլն: Ինչպես նկատելի է, *plē- նախաձևը հնդեվրոպական մյուս լեզուներում վկայված է ն՛ր ով, ն՛ դ-ով աճած ձևերով:

Հայերենում այս արմատից ծագել են *լի* «լցված, լրիվ, ամբողջ», *լնում* «լցնել», *լիք* «լրումն, բովանդակություն» ձևերը: Հայերենը ներկայացնում է հնդեվրոպական արմատի ն՛ արմատական՝ *լի*, ն՛ r-ով (լիր, լրումն), ն՛ n-ով աճած ձևերը՝ *լն*-ում:

Ինչպես հնդեվրոպական մյուս լեզուներում, այնպես էլ հայերենում հնդեվրոպական այս արմատից ծագած աման, տարողություն, որի մեջ լցնում կամ լցվում է որևէ բան, իմաստով գոյականներ չկան:

Հին հայերենում *լնում* բայի լայն կիրառությունը գործածությունից դուրս է մղել *ամամ* բայը: Բայց *աման*-ը, ինչպես նշվեց, միակ բնիկ հայերեն բառն է:

Հայերենում *հագնել* իմաստով գոյություն ունեն երկու բայ՝ *ագանիմ* և *զգենում*:

Հայերեն *զգենում* բայը հանգում է հնդեվրոպական *ges- «հագնել» արմատի *ges-nu- ձևին: Հնդեվրոպական լեզուների մեծ մասում այն ունի գուգահեռներ՝ հինդկ. vāsātē «հագնել», ավ. waste, vanhaiti «հագնել», հինդկ. vāsana-, ավ. vanhana «հագուստ, զգեստ», հուն. ἔνυσσι «հագնել», լատ. vestis «հագուստ», գոթ. wasjan «հագնել», wasti «հագուստ», մվգերմ. wester «կնունքի՝ տոնական հագուստ» և այլն:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ բալթիկ-սլավոնական լեզուներում այս նախաձևից առաջացած «հագնել» իմաստով որևէ ձև վկայված չէ: Հագուստ իմաստով բալթիկ-

սլավոնական լեզուների ձևերը հանգում են հնդեվրոպական *դնել* իմաստով նախաձևին (деть, одеть, надеть և այլն)¹³:

Հնդեվրոպական լեզուներում արտացոլված այդ արմատին հանգող բառերը ունեն «հագնել, զգեստ» նշանակությունը, ընդ որում *հագնել* այս դեպքում նշանակում է *հագնել զգեստ* և ոչ թե, ենթադրենք, կոշիկ:

Հագնել իմաստով հնդեվրոպական ծագման մյուս բայը *ազանիս*-ն է: Նույն *ազանիս* արմատից է ագուցանել «հագցնել, օղակի մեջ անցկացնել» բայը¹⁴:

Ազանիս բայը հանգում է հնդեվրոպական *eu- «ձգել՝ քաշել, հագնել՝ վրան քաշել շոր՝ հագուստ՝ կոշիկ», *ou-tlā «կապ» արմատին: Հնդեվրոպական լեզուներում այս արմատն արտացոլված է տարբեր իմաստներով՝ ավ. αουθρα «կոշիկ», լատ. ex-uo «հագնել», ind-uviae «հագուստ, զգեստ», ind-uvium «ծառի կեղև», լիտվ. aviù, -ēti «կոշիկ հագնել», aũklė «կոշիկի քուղ, կապ», եկսլավ. izuju, izuti «կոշիկ հանել», հեկսլավ. obuju, obuti «կոշիկ հագնել» և այլն:

Հայերենում *հագնել*, *հագուստ*, *զգեստ* նշանակությամբ հոմանիշների առկայությունը պայմանավորված է այդ արմատների իմաստային-կիրառական տարբերություններով:

Ազաիս բայի համար ՆՀԲ-ում բերվում են հետևյալ իմաստները. «զգենլի ինչ առնուլ զանձամբ, յոտս կամ յայլ մասն մարմնոյ»¹⁵: Բերված բնագրային օրինակներում կան և՛ հագուստ, և՛ կոշիկ հագնելու իմաստով կիրառություններ:

Չգենում բայի համար բերվում են «ազանել, արկանել զիւրև. զգածիլ, ունիլ, կրել յանձին, առնուլ զանձամբ. հագածիլ. զարդարիլ»¹⁶:

Կարելի է ենթադրել, որ *ազանիս*-ն ունեցել է ավելի լայն իմաստ՝ նշանակելով հագնել և՛ կոշիկ, և՛ հագուստ. հմմտ. հնդեվ-

¹³ Տե՛ս **М. Фасмер**, Этимологический словарь русского языка (в четырёх томах), т. 1, Москва, 1986, էջ 509:

¹⁴ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. I, էջ 75:

¹⁵ ՆՀԲ, հ. I, էջ 2:

¹⁶ Անդ, հ. I, էջ 727:

րոպական *eu, *ou-elā արմատին հանգող հայերենի *աւղ, օղ* «կոշիկ» իմաստով բառերը, ինչպէս նաև *աւթոց* «ծածկոց» իմաստով բառը:

Զգենում բայը գործածվել է միայն զգեստ հագնել իմաստով. հավանաբար այն հատուկ է եղել ավելի բարձր, վսեմ ոճին. հմմտ. գերմանական լեզուների «կնունքի՝ տոնական հագուստ» և հայերենի «զարդարիլ» իմաստները:

Նույն արմատից ծագած *զգեստ* գոյականը նույնպէս *հագուստ* բառի համեմատությամբ հիմա էլ ավելի տոնական հագուստ իմաստն է արտահայտում: *Ազանիմ* բայի հետագա հնչյունական փոփոխությունները ևս պետք է բացատրել այդ բառի ավելի լայն և հաճախական գործածությամբ:

Հայերենի հնդեվրոպական ծագման հոմանիշ բայերի իմաստային և գործառական ոլորտների քննությունը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացությունների.

ա. հոմանիշ արմատներից մեկը, ունենալով բառակազմական ավելի լայն հնարավորություններ և իմաստային շատ նրբերանգներ, դուրս է մղում մյուսին, և վերջինս սկսում է գործածվել իր մեկ, ավելի նեղ իմաստով (հմմտ. ամամ–լնում, ածեմ–բերեմ).

բ. հոմանիշները տարբերվում են գործառական ոլորտների բաշխմամբ (հմմտ. ազանիմ–զգենում):

ՎԱՅԹԵԼ/ՎԱԹԵԼ/ՎՈԹԵԼ

Հայերեն *վայթել, վաթել* բայերն ունեն «թափել (ջուր, արյուն), հոսել, հոսեցնել», իմաստները: Էդ. Աղայանը «Արդի հայերենի բացատրական բառարանում» *վաթել* «թափել, հոսեցնել», բայը բերում է գավառական նշումով¹, իսկ *վայթել*-ը հղում է *վաթել*-ին²: *Ոթել* բայը (ոչ՝ *վոթել*)՝ դարձյալ նույն իմաստներով բերվում է արևմտահայերեն նշումով³:

Ստ.Մալխասյանը «Հայերեն բացատրական բառարանում» *վաթել* բայը հղում է *վայթել, վոթել* ձևերին՝ «թափել, հեղուլ, դուրս թափել» իմաստներով: Նա բերում է նաև *վայթուկ* «տղամարդու սերմ», *վիթել, վիթվիթ* «արագաշարժ, ճապուկ», *վայթվթել* (կրկնավոր ձև *վայթել*-ից) «թափթփել, թափթփվել» իմաստներով՝ բոլորն էլ բարբառային նշումով⁴:

Ռ. Ղազարյանը և «Գրաբարի բառարանում»⁵, և՛ «Գրաբարի հոմանիշների բառարանում» բերում է միայն *վայթել* բայը՝ «թափել, հեղուլ» իմաստներով⁶, իսկ *վաթել*-ը՝ գրաբարյան *վայթել* հղումով, տեղ է գտել «Միջին հայերենի բառարանում»⁷:

«Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում բերվում են *վաթել* (տե՛ս *վայթել* նշումով) և *վայթեմ*, նաև ռամկական համարվող *վաթել, վոթել* բայերը՝ «ի դուրս թափել, արտաքս հեղուլ, դատարկել» իմաստներով⁸:

¹ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1351:

² Նույն տեղում, էջ 1355:

³ Նույն տեղում, էջ 1129:

⁴ Ստ.Մալխասեանց, Հայերենբացատրականբառարան, հ, 4, Եր., 1945, էջ 295 (այսուհետև՝ ՀԲԲ):

⁵ Ռ. Ղազարյան, Գրաբարիբառարան, Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 1330:

⁶ Ռ. Ղազարյան, Գրաբարիհոմանիշներիբառարան, Եր., 2006, էջ 626:

⁷ Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Բ, Եր., 1982, էջ 363:

⁸ Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 778 (այսուհետև՝ ՆՀԲ):

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» բերում է *վայթել* բայը՝ «դուրս կամ ցած թափել, պարպել» իմաստներով, և *վայթել, վոթել, վիթեալ* ձևերը՝ ռամկական նշումով⁹: Հր.Աճառյանն այն համարում է անհայտ ծագման բառ:

Վայթեմ բայի ստուգաբանությանն անդրադառնում է Գ. Ջահուկյանը «Очерки по истории дописьменного периода армянского языка» աշխատության մեջ: Խոսելով հ.-ե. *ս-ի՝ հայերենում օրինաչափ արտացոլումներից ունեցած շեղումների մասին՝ նա նշում է, որ հ.-ե. *ս-ին հայերենում կարող են համապատասխանել նաև վ, ք, կ՝ օրինաչափորեն սպասվող գ-ի իմաց:

Վայթեմ բայը (արմատի *վաթ-*, *վոթ-*, *վեթ-* տարբերակներով)՝ «հոսել, թափել, հոսեցնել» իմաստներով, նա համեմատում է լատ. *ūvidus* «թաց, խոնավ», *ūmecto* «խոնավացնել, թրջել», հին իսլ. *vökr* «խոնավ», *vakva, vekkja* «թափել (արյուն)», հին հնդկերեն *uksáti* «խոնավացնում է» ձևերի հետ և հանգեցնում է հ.-ե. **ueg*¹⁰-, -t- «խոնավ, խոնավացնել» նախաձևին¹⁰:

Իհարկե, «թաց, խոնավ, խոնավացնել» իմաստներով արմատը կարող էր ունենալ «թափել, հոսել, հոսեցնել» իմաստային զարգացումները: Բայց, կարծում ենք, *վայթել, վաթել* բայերի համար թերևս ավելի հավանական է ենթադրել հ.-ե. **uedo-* <*(a)*ued-* «ջուր, թրջել, խոնավացնել, հոսել», նախաձևից ծագած լինելը. այս նախաձևից է ծագած համարվում նաև հայերեն *զետ* բառը՝ «հոսող ջուր» իմաստով¹¹:

Հ.-ե. **uedo-* արմատը զուգահեռներ ունի հ.-ե. գրեթե բոլոր լեզուներում:

Վ.Վ. Իվանովը, խոսելով հ.-ե. **ued-* «ջուր» արմատի՝ խեթերեն զուգահեռների մասին, նշում է, որ խեթերենում պահպանվել են այս անվանական ամատի հ.-ե. արխաիկ տարաիմք՝ *r/n*

⁹ Հր.Աճառյան, Հայերենարմատականբառարան, հ. 4, Եր., 1979, էջ 300 (այսուհետև՝ ՀԱԲ):

¹⁰ Գ. Ժաուկյան, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, стр.265.

¹¹ Տե՛ս նաև Գ. Ջահուկյանի նշվ. աշխ., էջ 91:

հերթագայությունը տարբերակները¹². r/n հերթագայությունը հունարենում արտացոլվել է իբրև -r-: **-r̥t-* > *ατ-*: ὕδωρ: ὕδ-ατ-οσ.

Այս արմատին են հանգում հին հնդկերեն *udan* «ջուր», լատիշերեն *udris* «ջրասամույր», հին հնդկերեն *udra-s* «ջրային (գետի) կենդանի», հունարեն ὕδρος «ջրային օձ, հիդրա», հին սլավոներեն *выдра*, ռուս. *выдра* և այլն¹³: Այս արմատից են սլավոնական լեզուների *вода*, *ведро* բառերը: Մ. Ֆասմերը բերում է նաև *ավեստ.* *udra*, հին պրուս. *wudro* գուգահեռները¹⁴: Վ.Վ. Իվանովը գրում է, որ **yed-* անվանական արմատը ունեցել է բայական իմաստ՝ վկայակոչելով Ա.Մեյերին, և նշում է, որ անվանական և բայական արմատները պահպանվել են հին հնդկերենում¹⁵:

Վերը բերված ձևերը թույլ են տալիս հանգելու այն եզրակացության, որ հայերենում ևս *h.*-ե. **yed-* նախաձևը արտացոլվել է ն՝ իբրև անվանական (*գետ*), և՛ իբրև բայական (*վայթեմ*, *վաթեմ*, *վոթեմ*) արմատ: Ընդ որում, բայական ձևերը դրսևորում են արմատի տարբեր ձայնավորումները, ինչպես և ռուսերենում՝ *вода*, *ведро*, *выдра*:

Վայթեմ բայը առաջին անգամ վկայված է Ագաթանեղոսի «Հայոց պատմութեան» մեջ՝ «ի վայր վայթեցին գաղիս նորա» (էջ 107)¹⁶:

Վայթեմ-վաթեմ բայերը ամենայն հավանականությամբ գուգահեռ գործածվող ձևեր են եղել (*այ-ա* անցումը հայերենի համար սովորական է. հմմտ. *վայր-վար*, *այր-արական* և այլն):

Ժամանակակից հայերենի բառարաններում բերվող *ոթել* ձևը՝ *վոթել*-ի փոխարեն, հավանաբար հիպերկորեկցիայի արտահայտություն է: Այս ենթադրության համար հիմք կարող է ծառայել *nhnasy* բառի՝ բառարաններում վկայված *վոհնասկ* ձևը¹⁷: *Վայթեմ-*

¹² **Вяч.Вс. Иванов**, Труды по этимологии индоевропейских и древнепереднеазиатских языков, т. 1, М., 2007, стр. 233.

¹³ Նույնտեղում, էջ 235-236:

¹⁴ **М.Фасмер**, Этимологический словарь русского языка, т.1, М., 1986, стр.367.

¹⁵ **Вяч. Вс.Иванов**, указ. Соч., стр. 238.

¹⁶ ՆՀԲ, հ. 2, էջ 830:

¹⁷ ՀԱԲ, հ. 4, էջ 347:

վայթեմ բայի պարզական արմատը՝ *վայթ*, պահպանվել է *ջրվայթ*¹⁸, *անձրևվայթ*¹⁹ բառերում:

Հր. Աճառյանը իր արմատական բառարանում *թանալ* բային նվիրված բառահոդվածում *թօնուտ* բառի բացատրության ժամանակ բերում է *անձրևոթ* բառը²⁰: Կարելի՞ է արդյոք այստեղ տեսնել *ոթ* արմատական ձևը:

Թերևս այս բայերի հետ են կապվում նաև *վետ*, *վետվետ* բառերը, որոնց համար նշվում են «ալիքների ծուփը»²¹, «հոսանք կամ ծուփք, ալիքների ծածանում» իմաստները²²:

Հայերեն *վայթեմ*, *վայթեմ*, *վիթեմ* բայերի հ.-ե. ծագումը, կարծում ենք, ակնհայտ է: Հ.-ե. ծագում կարելի է վերագրել նաև հայ. *ոթիս*, բարբառներում՝ *վեթրէս*, *վօթիս* «խոնաւ տեղեր ապրող սև ժանտահոտ միջատ մը» բառին (Ստ. Մալխասյանցը բերում է նաև *ջրի ոթիս* բացատրությունը)²³, մանավանդ եթե նկատի ունենանք հ.-ե. մյուս լեզուներում առկա վերը նշված ռուս. *выдра*, հուն. «հիդրա, ջրային օձ», հին պրուսերեն *wudro*, հին հնդկերեն *udrus* «ջրային կենդանի», գուգահեռները: Եթե հնդեվրոպական լեզուներում այդ արմատից կարող էին ծագել ջրային կենդանի նշանակությամբ բառեր, ապա հայերենում էլ այն կարող էր ունենալ «խոնավ տեղերում բնակվող միջատ» իմաստային զարգացումը:

Կարծում ենք, որ *վայթեմ*, *վայթեմ*, *վիթեմ* բայերի հետ իմաստային մերձավորություն են դրսևորում հայերեն *վեժ*, *վիժեմ*, *վիժակ* բառերը:

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» բերում է *վեժ* «դուրս թափել, դուրս հոսիլ» արմատը, որն առանձին

¹⁸ ՀԱԲ, հ.3, էջ 312(մեզբառահոդվածում) :

¹⁹ ՀԲԲ, հ.1, 1944. էջ 149, հ.4, էջ 153:

²⁰ ՀԱԲ, հ.2, էջ150:

²¹ ՀԱԲ, հ.2, էջ336:

²² ՆՀԲ, հ.2, էջ 819:

²³ ՀԱԲ, հ.4, էջ 335:

անգործաձական է, և *վիժել, վիժիլ, վիժակ, վիժանուտ* բառերը՝ առանց խոսելու դրանց ծագման մասին²⁴:

Այս արմատը այլ լեզվաբանների կողմից (Է. Բենվենիստ, Հ. Բեյլի, Գ. Ջահուկյան) համարվել է իրանական փոխառություն²⁵:

Վէժ արմատը և նրանով կազմված *վիժակ, վիժեմ, վիժանուտ* բառերը՝ համապատասխանաբար «հոսանք, սահանք», «հոսելի վայր, գահավիժել, վայրաբերել», «հոսանուտ», իմաստներով, կարծում ենք, կարելի է կապել վերոնշյալ բայերի հետ: Իմաստային մերձավորությունը ակնհայտ է, հնչյունական տարբերություններն էլ բացատրելի են:

Հ.-ե. լեզուների տվյալները հաշվի առնելով՝ կարելի է նկատել հնչյունական համապատասխանությունների տիպաբանական ընդհանրություններ, մասնավորապես պայթական/շփական տարբերակներով արմատների առկայությունը (հմմտ. ռուս. мигать-мжить, мог-у-мож-ет, видеть-вижу, логово-ложе, հայ. *օգուտ, օժիտ, մէգ-մուժ, ճէտ* «զավակ, սերունդ», բրբռ. *ճիժ, տուզանել-տույժ*: Պարսկերենում էլ դ-ժ հնչյունական անցումը վկայվում է նույն բառերի բարբառային տարբերակներում՝ *վարդապետ-վարժապետ*²⁶):

Այսպիսով՝ կարելի է հ.-ե. *yed-արմատից ծագած համարել հայերեն *վայթեմ* (իր տարբերակներով), *ոթիս* և *վէժ, վիժեմ* բառերը:

²⁴ Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, Հայերենի իրանական փոխառությունները, Եր., 1990, էջ 261:

²⁵ ՀԱԲ, հ. 4, էջ 335:

²⁶ ՀԱԲ, հ.4, էջ321:

ԳՈՒՂՁՆ

Հայերեն *գուղձն* բառն ունի «հողի կոշտ, հողի խոշոր կտոր» իմաստները: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում *գուղձն* բառը (բերվում են նաև *գուղձ, գուձ* տարբերակները, որոնք հղվում են *գուղձն-ին*) բացատրվում է «զանգուած կամ կոշտ հողոյ. սակաւ մի հող՝ ձեռնաչափ, ոտնաչափ»¹:

Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանում» *գուղձ, գուղձն* բացատրվում են իբրև «բերանի խոռոչում և այտերի վրա առաջացող կոշտ, ուռուցք»²:

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» *գուղձն* բառը դնում է չստուգաբանված արմատների շարքում և հիշատակում է, որ Գր. Ղափանցյանը այն կապում է *կորող* բառի հետ³: Հետաքրքրական է, որ *գուղձն* բառից առաջ նշվող *գուձ* արմատը Հր. Աճառյանը հղում է *կից* արմատին⁴, մինչդեռ ՆՀԲ-ում *գուձ, գուղձ, գուձն* բառերը բերվում են իբրև տարբերակներ:

Կից բառահոդվածում, խոսելով այդ արմատի նշանակությունների մասին, Հր. Աճառյանը նշում է, որ «Առձեռն բառարանում» գրված է *գուձ* կամ *գուձն*, և բերում է օրինակներ, որոնցում *կից*-ը գործածվում է *հող* բառի հետ (...այնչափ նիւթ կայ ի մին կից հողն...)⁵: Այս օրինակը ցույց է տալիս, որ *կից*-ն այստեղ գործածված է ոչ թե իրար կպած, իրար կից իմաստով, այլ նշանակում է մի ավաչափ, մի ձեռնաչափ հող և չի կապվում *կից* «մոտ, կցված» բառի հետ:

Գր. Ղափանցյանը «Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում» հոդվածում, խոսելով *ր/յ* և *ր/ո* հերթագայության մասին, անդրադառնում է *կորող* «չբանեցուած, վարուցան չեղած,

¹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Ե., 1979, հ. 1, էջ 579:

² Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 1987, հ. 1, էջ 158:

³ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ե., 1971, հ. 1, էջ 583 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ ՀԱԲ, Ե., հ. 2, էջ 595-596:

կոշտ, չոր, պինդ» բառին և համեմատում դրանք *կունձն* կամ *կունձն...*, *գուղձ(ն)* «հողի կոշտ, մեկ բուռ հող» բառերի հետ⁶:

Գր. Ղափանցյանը չի անդրադառնում այդ բառերի ստուգաբանությանը: Նա *ր/ն/ղ* հերթաազայության օրինակներ որոնելիս գուգադրում է *կորդ*, *կունձն*, *գուղձ-ն* ձևերը, բայց ուշադրության չի առնում նախ *կորդ* և *գուղձ* բառերի իմաստային կողմը (*կորդ* «չվարած, անմշակ հող» և *գուղձ*՝ «հողակոշտ») և ապա՝ բառասկզբի *կ* և *գ* հնչյունները: Իհարկե, *ր/դ*, *ղ/ձ* անցումները հատուկ են հայերենին, բայց *կ/գ* անցումը հայերենին հատուկ չէ, և թերևս այնքան էլ հավանական չէ մեկ բառի մեջ միանգամից երեք՝ *կ/գ*, *ր/դ*, *ղ/ձ* հնչյունական անցում: *Գուղձն* ձևը, ինչպես նշում է Հր. Աճառյանը, հանդիպում է նաև *կունձն*, *կունձն*, իսկ բարբառներում՝ նաև *գունցի*, *կունձդ*, *կունձ*⁷:

Կորդ բառի ստուգաբանությանն է անդրադարձել Գ. Ջահուկյանը՝ այն համեմատելով ուրարտ. *guldi/e(ni)* «կորդ, խոպան, անմշակ, ամայի» բառի հետ⁸:

Գ. Ջահուկյանը *գուղձն* բառի ստուգաբանությանը չի անդրադարձել: Իր «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ *գուղձն* բառը հիշատակում է մեկ բաղաձայնական *-ն*-ով հիմք ունեցող ոչ հնդեվրոպական բառերի շարքում՝ ենթադրելով, որ դրանք «...գոնե մասամբ պետք է ունենան ուրարտական ծագում կամ հայերենին անցած լինեն ուրարտերենի միջոցով»⁹, մեկ էլ հայերենի հնագույն շրջանի բառապաշարի բարբառային տարբերակներին նվիրված բաժնում, որում բերում է *կոշտ-գուղձն* հոմանիշները՝ վերջինս ուշ նշումով, այսինքն՝ համարելով V դարի առաջին կեսում չհանդիպող բառ¹⁰:

⁶ Տե՛ս Գր. Ղափանցյան, Հնեաբանական մի քանի մնացորդներ հայերենում, Տեղեկագիր ՀԽՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, Ե., 1927, հ.2, էջ 97:

⁷ Տե՛ս ՀԱԲ, հ.1, էջ 432:

⁸ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 432 (այսուհետև՝ ՀԼՊ):

⁹ Նույն տեղում, էջ 401:

¹⁰ Նույն տեղում, էջ 401:

Կարծում ենք, որ *գուղձն* բառը կարելի է կապել *գեղձ* «մարմնի մեջ խուլլ, ուռուցք» արմատի հետ:

Գեղձ բառի հնդեվրոպական ծագումը կասկած չի հարուցում¹¹: Այն հանգում է հ.-ե. *ghelǵha նախաձևին: Այս արմատից առաջացած բառեր են առկա սլավոնական լեզուներում՝ հւլ. žiléza, եկվալվ. жльза , բուլղ. жлеза, սլովեն. žiéza, հին չեխ. žiéza, լեհ. zolza, լուծիերեն žalza, լիտվ. gēležuones, gēležūnes, gēležūnes, բոլորն էլ *գեղձ* նշանակությամբ¹²: Հետաքրքիր է, որ *գեղձ* արմատի հետ են կապվում նաև այնպիսի բառեր, որոնք ունեն ընդհանրապես «ուռուցք, կոշտություն, մարմնի վրա առաջացած կոշտ» իմաստները: Մ. Ֆասմերը նշում է, որ Պերսոնը *գեղձ* արմատի հետ կապում է նաև հուն. γέλφω «սխտորի գլուխ» կամ «պճեղ» բառը¹³: Ինքը՝ Ֆասմերը, *գեղձ* բառի հետ համեմատում է նաև ռուս., ուկր. желвак, չեխ. žluna «золотуха» (մաշկային հիվանդություն, որի ժամանակ մաշկի վրա առաջանում են կոշտություններ, ուռուցքներ), սլովեն. želva «գեղձ», լատիշ. dzelva «այտուց մաշկի վրա» բառերը¹⁴:

Եթե հ.-ե. *ghelǵha նախաձևից կարող են ծագած լինել ոչ միայն «մարմնի մեջ խուլլ, ուռուցք», այլև ընդհանրապես «կոշտություն, կոշտ, կլոր իր» նշանակությամբ բառեր, ապա հայերենի համար հավանական կարելի է համարել նաև *գեղձ-գուղձ(ն)* «հողակոշտ» իմաստային անցումները, եթե նկատի ունենանք նաև միջին հայերենի՝ վերը նշված «բերանի խոռոչում և այտերի վրա առաջացող կոշտ, ուռուցք» նշանակությունները (տե՛ս հղում 2):

¹¹ Տե՛ս **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հ.1, էջ 534-535, Գ. Ջահուկյան, ՀԼՊ, էջ 127:

¹² **М. Фасмер**, Этимологический словарь русского языка, т.1, М., 1986, стр.42.

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 41:

ՏԻԼԱԻ/ՏԻԼՕ

Լոռու բարբառում գործածական է *տիլո* բառը՝ «սրբիչ՝ ամանները սրբելու, ջուրը չորացնելու համար» իմաստով:

Տիլո բառը վկայված չէ Հր. Աճառյանի «Գաւառական բառարանում», Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ում, գավառական այլ բառարաններում՝ բացառությամբ Ս. Գաբրամաջյանի «Նոր բառագիրք հայերէն լեզուի» (Կ.Պօլիս, 1910թ., էջ 1294) բառարանի. այնտեղ առկա է *տիլալ* բառը՝ «կտոր» իմաստատով: *Տիլո* բառը չի հանդիպում նաև Լոռու բարբառին նվիրված ուսումնասիրություններում:

Հր. Աճառյանը արմատական բառարանում բերում է *տիլալ* արմատը՝ «կտաւ» իմաստով, և նշում է, որ «ունի միայն Քաջունի»¹, չնայած արմատական բառարանի համար նյութեր քաղելիս Հր. Աճառյանը օգտվել է նաև Ս.Գաբրամաջյանի բառարանից:

Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում» բերվում են *տիլալ* (հազվադեպ բառ նշումով) և *տիլո* (գավառական բառ նշումով) բառերը՝ իբրև մեկ գլխաբառ, մեկ բառահոդվածով, և տրվում են երկու իմաստներ. 1. Քաթանի կամ կանեփի հաստ կտոր, 2. Ընդհանրապես կտոր, որով ամաններ են լվանում կամ սրբում: «Չայի տիլօ»²: Ստ. Մալխասյանցը *տիլալ* և *տիլո* բառերի կողքին նշում է վրաց. *tilo* –ն և բերում է Դ. Չուրինովի կարծիքը, որ վրացերեն *tilo*-ն փոխառություն է լատիներենից, և ավելացնում է, որ «սակայն լատ. կայ *tilia*, որ ծառ է»³:

Պետք է նշել սակայն, որ Դ. Չուրինովը վրացերեն-ռուսերեն-ֆրանսերեն բառարանում վրաց. *tilo* բառի բացատրության ժամանակ նշում է լատ. *tēla* (ոչ թե *tilia*, ինչպես գրում է Մալխասյանցը), որ նշանակում է կտոր (*ткань*), այնուհետև բերում է *ռուս. холсть* և

¹ ՀԱԲ, Ե., 1979, հ.4, էջ 405:

² Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Ե., 1945, հ. 4, էջ 412:

³ Նույն տեղում:

Ֆրանս. *toile* ձևերը, որոնք նույնպես ունեն «կտոր, կտաւ» իմաստները⁴:

Մ.Քաջունին «Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց» բառարանի երրորդ հատորում բերում է *տիլաւ* բառը՝ «կտաւ» իմաստով⁵, իսկ երկրորդ հատորում ֆր. *toile*, իտալ., լատ. *tela* «կտավ» բառերի բացատրության ժամանակ գրում է. «Ասի առհասարակ զամենայն ազգ անկուածոյ ի կտաւոյ, ի բամբակէ..., բայց առանձինն կոչին այն գործուածք, որ են ի կտաւոյ և ի կանափէ...»⁶:

Հ.-ե. լեզուներում «սրբիչ, թաշկինակ, անձեռոցիկ» նշանակությամբ բառերը ծագում են տարբեր արմատներից: Կ. Բաքի հ.-ե. լեզուների հոմանիշների բառարանում բերվում են այդ բառերի հոմանիշները տարբեր լեզուներում. «թաշկինակ» (*Handkerchief*) բառահոդվածում՝ լատ. *mantēla* (*man*(*manus*)-ձեռք և *tēla* -կտոր), հուն. *χειρόμακτρον* (*χειρο*-ձեռք և *μακτρον*-լաթ, կտոր) բառերը, և նշվում է, որ դրանք նշանակել են *սրբիչ*, բայց հետագայում գործածվել են նաև *թաշկինակ* նշանակությամբ: Իտալերենում կա *pezzuola* «թաշկինակ» բառը՝ *pèzza* «գործվածքի կտոր, կաժ» բառից, իսպաներենում՝ *pañuelo*, *pañó* «կտավ» բառից, ուելսերենում՝ *cadach*, որ նշանակում է «գրպանի շոր, կտոր», դանիերենում՝ *lommelørklæde* «թաշկինակ» (*lomme* «գրպան», *tør* «շոր» և *klæde* «կտոր, գործվածք» բառերից), նաև ռուս. *платок*, *полотенце*, *полотно*, ռուս. *batistá* «թաշկինակ» *բատիստ* բառից⁷:

Լատիներենում կա նաև *sūdārium* «թաշկինակ» (հ.-ե. **sudor*-«քրտինք» արմատից) և *ōrārium* «թաշկինակի տեսակ՝ դեմքը կամ բերանը սրբելու համար, անձեռոցիկ» (*ōs*, *ōris* բառից):

Սրբիչ նշանակությամբ բառեր կան իսպաներենում՝ *toalla*, նոր իռլ. *tuáille*, ուելս. *tywel*, միջին անգլ. *towaille*, նոր անգլ. *towel*,

⁴ **Чубинов Д.**, Грузинско-руско-французский словарь, С.-Петербург. 1840, стр.478.

⁵ **Մ.Քաջունի**, Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց, Վենետիկ, 1892, հ.2, էջ 236:

⁶Նշված աշխ., հ.3, էջ 742:

⁷ **Buck C.D.**, A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages, Chicago, 1949, p. 446-447.

հին վերին գերմ. *dwahilla*, միջին վերին գերմ. *dwehel*, շվեդ. *nusduk* (*nus* «քիթ» *duk* «կտավ, կտոր»)՝⁸ և այլն:

Հ.-ե. լեզուների այս բառերի քննությունը ցույց է տալիս, որ «թաշկինակ, սրբիչ» նշանակությամբ բառերի իմաստային բաղադրիչների մեջ առկա են «կտավ, գործվածք» իմաստով արմատներ: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ հայերեն *տիլալ* «կտավ» իմաստով բառը ևս կարող էր գործածվել սրբիչ նշանակությամբ:

Կարծում ենք, որ հայերեն տիլալ բառին ևս կարելի է վերագրել հ.-ե. ծագում և կազմված համարել հայ. *տիլ* (*տիղմ*)բառից:

Տիլ, *տիղմ* բառերի ստուգաբանությանն անդրադարձել է Հր. Աճառյանը, որն այն կապում է հ.-ե. **stēl*- «կաթել կաթկթել» նախաձևին. հունարենում կան *σταλάω* «կաթիլ-կաթիլ ձորել», *τέμα* «ճահիճ, ցեխ» բառերը⁹:

Գ. Ջահուկյանը կասկածելի է համարում այդ ստուգաբանությունը և *տիլ*, *տիղմ* բառերի համար ավելի հավանական է համարում հ.-ե. **dēl*-, **dēl-mo*-արմատից ծագած լինելը¹⁰:

Ստուգաբանության որ տարբերակին էլ որ նախապատվություն տանք, մի բան պարզ է, որ հայերեն *տիլ*, *տիղմ* բառերը ունեն հնդեվրոպական ծագում:

Հայերեն *տիլ* բառը նշանակել է «ջրալի ցեխ, թաց տիղմ»: *Տիլալ* «կտավ» բառը կարող էր ունենալ ջուրը ցամաքեցնելու համար կտոր, սրբիչ իմաստային զարգացումը (հմմտ. վերը բերված *sūdārium*, հուն. *σοῦδαρίον* «թաշկինակ» բառերը, որոնք կազմված են հ.-ե. **sudor* «քրտինք» արմատից, ինչպես նաև ռումիներեն *batista* «թաշկինակ բառը» բատիստ (կտորի տեսակ) բառից:

Հայերենի *տիլալ* «կտավ, սրբիչ» բառն էլ կարող էր կազմվել *տիլ* բառից՝ *-ալ* մասնիկով:

Տիլալ բառի *-ալ* մասնիկի համար կարելի է բերել զուգահեռներ ինչպես հայ. բնիկ *կուտ-կտալ*¹¹, *հարալ*¹² բառերից, բնա-

⁸ Նույն տեղում:

⁹ ՀԱԲ, հ. 4, էջ 406-407:

¹⁰ Գ.Ջահուկյան, ՀԼՊ, էջ118:

ձայնություններից (*ազր-աւ, կաք-աւ*), այնպես էլ հ.-ե. այլ լեզուներից (հմմտ պրսկ. *pārāv, պիլ. pēr«ծեր» արմատից, *պարս-աւ-էլ՝ պարս* - «քար» արմատից և այլն):

Ինչ վերաբերում է վրացերենի *տիլօ* ձևին, կարծում ենք, որ այն հայերենից (ոչ լատիններենից) կատարված փոխառություն է: Մեր այս ենթադրության համար հիմք են ծառայել Հր. Աճառյանի «Հայոց գրերը» աշխատության մեջ բերված հայ. *խաւ* և *գրաւ* բառերի վրացերեն *խաօ* և *գիրաօ* զուգահեռները: Հր. Աճառյանը, խոսելով հայերեն *աւ* երկբարբառի մասին, գրում է, որ այն վրացերենում արտացոլվել է իբրև *աօ*¹²:

Կարծում ենք, որ *աւ*-ը վրացերենում կարող էր արտացոլվել և՛ իբրև *աօ*, և՛ իբրև *օ*. մեկ ձայնավոր ունեցող բառերում առկա է *աւ-աօ* համապատասխանությունը:

խաւ-ը *խօ* չէր կարող հնչվել, քանի որ հակառակ դեպքում այն կհամընկներ վրացերեն *խօ* «հա, այո» բառի հետ¹⁴: Իսկ ահա երկու ձայնավոր ունեցող բառերում, ինչպես *տիլաւ*-ն է, առկա է *աւ-օ* համապատասխանությունը: Վրացերենում *տիլօ* բառն ունի «կտավ, քաթան, քուրջ, լաթ, փոշելաթ», նաև «սեղանի ջնջոց» իմաստները¹⁵:

Հետագայում վրացերենի *տիլօ* բառը փոխառվել է Լոռու բարբառում՝ հասկանալի պատճառներով, և գործածվել է «ամանների սրբիչ», (Մալխասյանցի բառերով ասած՝ «չայի տիլօ») նշանակությամբ:

¹¹Տես **Գ.Ջահուկյան**, Ստուգաբանություններ, ՊԲՀ, 1965, հ.1, էջ257:

¹²Տես **Գ.Ջահուկյան**, Ստուգաբանություններ, Լրաբեր, 1973, հ.6, էջ20:

¹³ **Հր.Աճառյան**, Հայոց գրերը, Ե., 1984, էջ 588:

¹⁴ **Ռ.Գորգաձե**, Վրացերեն-հայերեն բառարան, Ե., 2005. էջ 531:

¹⁵ Նույն տեղում, էջ 531:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայերենի՝ արմատական տարբերակներով կազմված կրկնավոր բայերը.....	3
2. Գանգատիմ.....	10
3. Խարել/խարխափել.....	16
4. Գրաբարի յ- նախամասնիկով բայերը.....	19
5. Հայերենի հ.-ե. ծագման գ- նախամասնիկով բայերը.....	26
6. Գրաբարի «զգայական ընկալումներ» իմաստային խմբի բայերը.....	38
7. Գրաբարի «միտք, մտածողություն» իմաստային խմբի բայերը.....	47
8. Հին հայերենի հ.-ե. ծագման հոմանիշ բայերը.....	55
9. Վայթել/վաթել/վոթել.....	64
10. Գուղձն.....	69
11. Տիլալ/տիլօ.....	72

ՆԵԿՏԱՐ ՄԻՄՈՆՅԱՆ

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ
ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Ձևավորումը և էջադրումը՝
Մ. Ն. Խառատյանի

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ